





# Գ Ե Ւ Ա Ն

Տպիսիսի Հայոց նկեղեցիների

Պատրուահց

Տփիսիսի Գործակալ Դրիդոր աւագ բանանայ Մանդակունի

ՏՓԻՆԻ

Տպարան «Հայօխիս» Դանուվակայա № 3.

1910



281.6

Մ - 25

Ապրիլի 1 1881 թ.

# Թ Ի Ւ Ա Ն

Տիկիսի Հայոց եկեղեցինելի

Լոյս տհամաւ

Ի Հայրապետութեան տ. տ. Մատթէոս բ. ծայրագոյն պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց

Առաջնորդութեան Վրաստանի և Իմհրէթի Հայոց  
տ. Գարեգին Արքակալիոպոսի Սաթունեանց

Պատրաստեց

Տիկիսի Գործակալ Գրիգոր առագ քահանայ Մանդակունի

ՏՓԽԻՄ

Տպարան «Հայութ» Գանովսկայա № 3.

1910




A  $\frac{\pi}{5723}$

## Յ Ա Ռ Ո Ւ Զ Ե Բ Ա Ն

Արաստանի և Խմելքթի Հայոց պիճակացին Կոնսիստորիայն երբեմն երբեմն արձակում է հրահանգող հրամաններ, սրոնք գործակալների միջոցաւ առանձին առանձին դրութիւններով ուղարկում են իւրաքանչիւր եկեղեցւոյ միարան քահանաններին, որոնցից ոմանք հրամանը կարգադրուց յետոյ գնում են եկեղեցւոյ դիւան կոչուած պահարանումը, և ոմանք էլ թողնում են անուշադրութեան, որ ՚ի հարկին հանդիպելով գժուարութիւնների դիմում են դործակալին տեղեկութիւն ստանալու. և շատ անգամ պատահել է՝ որ նու էլ գժուարացել է նորանց գոհացնել՝ արձակուած հրամանի բովանդակութիւնը անսխալ չյիշելուն, ուստի այս գժուարութեան առաջն տռնելու համար՝ մտածեցի մի առձեռն «Դիւան Տփխիսի Հայոց եկեղեցինների» պատրժատել, որ իւրաքանչիւր ոք՝ իւ մօտն ունենալով՝ զերծ լինի դժուարութիւնների և զեղծմունքների ենթարկուելուց: Վ.րդ, ի 21-էն Յունփարի 1899 ամի Վրաստանի Հայոց թէմի Առաջնորդ ամենասպատիւ տ. Գէորգ արք-եպիսկոպոս Սուրէննեանցի հրամանաւ կարգուելով Տփխիսի և շըրջակայ գիւղերի գործակալ (բացառութեամբ 1902 ամի) յընթացսլրիւ առանձնամեայ գործակալութեանս՝ զգալի կերպիւ տեսայ՝ մի հրահանգիչ Դիւանի անհրաժեշտ կարօտու-

թիւնը, ուստի տասնամեայ դործակալութիւնս ասլարդիւնը չանցելու առթիւ, քահանաներին ոռնիկ մատակարելու Շիննադատելի Կանոնադրութիւնը՝ ի լոյս ընծայթլուց յետոյ մտածեցի մօտս գտնուած դործքերիցը շրջաբերականներով յայտարարուած օրինադրական հրամանները ժողովել, նորանց բովանդակութեանը բարդեցնող աւելորդ կէտերը յապաւել, պարզը, հասկանալին և բուն էականը աշխարհաբառի վերածելով՝ պատրաստել այս Շինան Տիխիսի Հայոց եկեղեցիներին գրքոյկը, և ընդհանուրի հետաքրքրութեան և դիւրութեան համար 'ի լոյս ընծայել, որը յուանվ եմ, լինելու է կարողագոյններին օրինակ և գրգիռ աւելի լիակատարը կազմելուն:

Դործակալ Տիխիսի Դիմոքրո աւագ քան. Մանդակունիք







Տ. Տ. Մատրենս թ, Իզմիրիկանց ծալքագոյն պատրիարք  
կարուղիկոս ամենայն Հայոց.

## ՈՒՂԵՐՁ<sup>\*</sup>)

Ի Շնորհաբաշխ գալուստ Տ. Տ. Մատթեոսի բ. Մայրազոյն  
պատրիարք Կարուղիկոսի Ամենայն Հայոց և Ասպետի  
Կայսերաց

Աստուածարեալ Վեհափառ Տէր, Ամենաբարձրեալ  
Աստուածոյ հրաշալի յեղաշրջութեամբն ազգը ի մի ձուլուե-  
լով՝ Զեր Վեհափառութեանը բնտրեց արժանաւոր գահա-  
կալ պարթեածին՝ Գրիգորի պանծալի Գահին, և այսպէս  
բարձրացրեց Զեղ այն խորհրդաւոր և բազմահոգ բարձրու-  
թեան վիրայ՝ որտեղ մէկ ոտքը դրել էք մի ամենաբարձր  
լեռան գաղաթին, միւս ոտքը՝ միւս մի ամենաբարձր  
լեռան գաղաթին, մէկովը հասկը էք կեանքի պատկա-  
ռելի հասակին՝ միւսովը փառքի պատկառելի աստիճա-  
նին. աշխարհից չունիք այլես որնէ սպասելիք, եթէ ոչ  
այդ փառքը ցյաւիտեան անազարտելի պահելու համար  
իբրև տեսանելի նախախնամութիւն՝ Զեր բնածին եռանդի  
շրջանկատ հայեցողութեամբն անկասկած հոգալու էք հ-  
կեղեցւոյ դաւանաբանական կէտերը ամուր կերպիւ ան-  
փոփոխելի և անայլայելի պահել՝ հաւատքի ջերմ լոյսը՝  
ընդհանուր Հայերի որտերումը վառ և բորբոք պահելու  
միջոցը ընդարձակել. Աստուածաբանական բարձր գիտու-  
թեան ամենակարենոր և անհրաժեշտ միակ սուրբ տաճարը  
կառուցանել. և բարեկիրթ ուսմանց ուսումնաբանների

թիւր ապահովացուցմամբ շատացնել որով ժողովրդի կեանքը հակուի գէպ 'ի խաղաղը՝ և գէպի երջանիկը:

Եւ այսպէս ի միջի եկեղեցական և ազգային բազմաթիւ և անհրաժեշտ հոդայու պէտքերի ամենախոնարհնարար համարձակվում եմ յուշ ածել Զեր Վեհափառութեանը՝ այլ և ուշադրութիւն դարձնել հոդալ և մեր քահանայական դասի կենսական խնդրի հիմնական բարեկարգութիւնը. որով միայն քահանայութիւնը կարող է իրան յասուկ բազմակերպ պարտաւորութիւնների անթիւրի կատարումովը՝ գեղեցկանանալ և փայլի իւր բարձր դիրքի վերայ:

Վեհափառ տէր, քաջայայո է ամէնին՝ որ արգար օրէնքը հրամայում է հաց տու՝ և աշխատանք պահանջել. և ինչ չափով տալ՝ նոյն չափով պահանջել, չթողուլ աշխատաւորին զրկուիլ անշշատին յղփանալ. չթողուլ յղփացողին կերպ կերպ բարեկարգութեան անունով էականը շփոթել՝ որ կրկին ժամանակ վաստակէ յղփանալու, ո՞չ այլ տալ աշխատանքի ծանրութիւնը ամէնին հաւասար՝ և առանց զրկանաց՝ տալ վարձատրութիւնն էլ ամէնին հաւասար:

Արդ, թէ քաղաքների և թէ գիւղերի քահանաների կեանքը վերին աստիճանի անբարդար և անբարեկարգ վիճակի մէջ յուսահատեցուցիչ նախատինըներով տաղնտպում է, որովհետեւ հանդերձ մեծամեծ զրկանքներով՝ ունի այլ գնչուներին յասուկ ստորացուցիչ կողմերը, որ քահանայի բարձր արժանապատութիւնը նսեմացնելով՝ մի բռակի մէջ հողի հետ է հաւասարեցնում:

Քահանայական դասը՝ թէի ժողովրդի ամենամօտիկն է, թէի բոլոր զէպքերում նորա բարեկամն է, թէի նորաօգնա՛ւնն է, թէկ նորա ուրախութեանցը մասնակիցն է, թէ՝ նորա արտամութեանցը՝ արտամալից և միսիթարն է,

սակայն նորա բոլոր արժանաւորութիւնները զգուելի սոս-  
րութեամբ խորտակվում է միմիայն վարձատրութեան խըն-  
դրումը, կրում է քահանայն աշխատանքի ծանրութիւնը՝  
կրում է և զրկանքի դառնութիւնը՝ այն էլ բաժակի լի ու  
զաղուն դառնութեամբ:

Արդ, Զեր Վեհափառութեանը սորա հետ մատուցա-  
նելով մի օրինակ «Քննադատելի կանոնադրութիւն» ի գի-  
մաց քահանաների՝ ամենախոնարհարար աղաջումեմ, որ Զեր  
Հայրապետական բարձր հոգածութեան չնորհիւ բարեհա-  
ճիք հրամայել թեմիս հանճարաշատ ևո աջնորդին՝ որի բար-  
ձաթիւ հոգսերից՝ զրեթէ առաջինը այս խնդիրն է, և որի  
հիմնական կերպիւ կատարումն տալը՝ թողել է Վեհափա-  
ռութեանդ չնորհարեր գալստեանը, որ հոգեորականների  
և աշխարհականների միացեալ ժողովով, այդ կանոնադրու-  
թեան ծրագրովը կազմէ մի հիմնական արդար ու լիակա-  
տար կանոնադրութիւն, և այնուհետև Զեր Վեհափառու-  
թեան բարձրագոյն Հրամանի հաստատութեամբն դնէք ի  
զործադրութեան, որով ու մեծ Քահանայապետ, արդարի  
Զեր խնկելի անուան լիաճառագայթ փայլը՝ Զեր անմահ  
նախորդներից առաւել կգելազանցնէք, և մեծ Հայրապետ  
կոչուելու ախտղոսը արդարութեամբ կդրօշմէք մեր հոգւոյ  
և մեր սրտերի վերայ անջնջնլի ցյաւիտեան:

Ո՞վ ամենաբարձրեալդ Աստուած՝ նայիր երկնքիդ  
բարձրութիւնիցը մեր վերայ, որ ահա տոչորուած սրտերով,  
արտասուալիր աչքերով հայցում ենք Քո անսահման առա-  
տապեղ զթութիւնը, հերիք համարիր բարկութեանդ գաւա-  
կանի Հայ աղդի վերայ տարածելը՝ վերցընւ Հայերիս սրբ-  
տերի և մտքերի վերայիցը՝ խօսականին յատուկ ազգանառ  
ցնորմունքները, ջնջիր մեր միջիցը հաւատքի ցեցերը, ի-

ջեցրու մեր վերայ՝ ամենասուրբ Հողոյդ կենդանաբար չնորհաբաշխ ցօղերը. բաց մեր հոգւոյ՝ խաւարի ազդեցութեամբ կուրացած աշքերը, վառիր մեր սրտերի մէջ սիրոյ և միութեան կրակը, սրով տեսնելով և հասկանալով մեր խսկական պարտաւորութիւնները՝ ազգովին ի մի ձուլուինք և Քոյրապարգենմեծ Հայրապետիս զօրեղ ոյժ տանը և բոլոր հրամանները՝ որպէս Քեզանից արձակուած սուրբ պատգամներ՝ անձնանուէր սիրով լսենք ու կատարենք, որով մեր տառապակիր Հայ ազգը հետդիետէ ոզի առնու և վերակենդանանայ:

Ո՞վ ամենամեծդ Աստուած, տուր մեծ Հայրապետիս երկար և առողջ կեանք և պարգեիր մեծ Գրիգորների և Ներսէսների դօրեղ ոյժ և անվեհներ առկուն ոզին՝ ի խաղաղ վերակենդանութիւն նահասակ ազդիս, և ի ցանկալի ազատութիւն զանակոծ եկեղեցոյս ի գրանց դըժուայնոց :

Տիիիիսի զործակալ Գրիգոր աւագ քահ. Մանդակունի

Ի 15-ն Յունիսի 1909 ամի

Տփխիս:

\*) Այս ուղերձը պէտք է կարգայի վեհափառ հայրապետի առաջին անգամ Տփխիսում չնորհաբեր մուտ զործելու ժամանակ, և որովհետեւ հանդամանքները չներեցին, ուստի յարմար զատեցի այսուղ դնել:





Տ. Գեորգ արք-Եպիսկոպոս Սուրբ Եանց  
նախակին թեմակալ առաջնորդ Հայոց Վրաս-  
տանի եւ Խմբէքի, այժմ տեղակալ եւ  
Նախանդամ Մինօղին ո. Էջմիածնի.

## ՏՓԽՒԱՎԻ ԹԷՄՆ ՈՒՆԻ

### ՏՓԽԻՄԻ ԹԷՄՆ ՈՒՆԻ

Գոլոցներ	.	.	.	.	82
Ուսուցիչներ	.	.	.	.	122
Ուսուցչուհներ	.	.	.	.	107
Աշակերտներ	.	.	.	.	4356
Աշակերտուհներ	.	.	.	.	4216
Ել և մուտ	.	.	.	.	150,602 և 41 լ.
Քաղաքներ	.	.	.	.	14
Գիւղեր	.	.	.	.	377 ✓
Տներ	.	.	.	.	44,885
Բնակիչներ	.	.	.	.	274,176
Արական	.	.	.	.	147,099
Եգական	.	.	.	.	127,909
Եկեղեցիներ	.	.	.	.	369 ←
Քահանաներ	.	.	.	.	336
Վանօրայր	.	.	.	.	7
Ուխտատեղիբ	.	.	.	.	8
Վանահայր վարդապետ	.	.	.	.	6
Հոգեոր կառավարութիւն	.	.	.	.	3
Գործակալութիւն	.	.	.	.	16
Վիճակային կոնսիստորիայ	.	.	.	.	I

**Տիկիսի Հայոց Եկեղեցիներ, քահանաներ, սար-  
կաւազներ եւ դպիրներ:**

1. Վանայ Առաջնորդական Աւագ Եկեղեցի

1. Եղնիկ աւագ քահանայ Երգնկեանց
2. Գիւտ աւագ քահանայ Աղանեանց
3. Գրիգոր քահանայ Խօջաէնիաթեանց
4. Դալուստ քահանայ Սրուլեանց
5. Խորէն քահանայ Խուցեանց
6. Ղևոնդ քահանայ Ալիխանեանց  
 Բաց է սարկաւագի տեղը,  
 Ուրաքալիր Կիկողայոս Բաւէեանց  
 , Յովհաննէս Համբարձումեանց  
**Դպիր Արշակ Շխեանց**  
 , Գրիգոր Սարգսեանց  
 , Յովհաննէս Հաջեանց

2. Ա. Մարգիս

7. Կոստանդիանոս քահանայ Արարատեանց
8. Եղնիկ քահանայ Ալխազեանց  
 Դպիր Մնացական Պօղոսեանց

3. Հրեշտակապետաց Եկեղեցի

9. Բարկէն քահանայ Տէր-Խոտչատրեանց

4. Կարուղիկ Ա. Աստուածածին

10. Ստեփանոս աւագ քահանայ Սամուէլեանց
11. Աշոտ քահանայ Թէմուրազեանց
12. Գրիգոր քահանայ Կախոյեանց

13. Յովհաննէս քահանայ Ամիրխանեանց  
Դպիր Յովհաննէս Գիլրդիդեանց  
,, Արտէմ Բասեանց  
,, Գարեգին Սրուանձտեանց  
5, Բերդենէմի ս. Աստուածածին

14. Գէորգ քահանայ Մեհրապեանց  
15. Յովհէփ քահանայ Արուկեանց  
Դպիր Տիգրան Տէր-Դաւթեանց  
,, Գարբիէլ Փիլթակեանց  
6, Կուսանաց ս. Մտեփանոս անապատ

16. Արսէն աւագ քահանայ Բաղրատունի  
7, Քարափի ս. Գէորգ

17. Յովհաննէս քահանայ Պապովեանց  
18. Դեռնդ քահանայ Մեհրապեանց

8. Մողնեոյ ս. Գէորգ

19. Սիմէօն աւագ քահանայ Զմշկեանց  
20. Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանց  
21. Սահակ աւագ քահանայ Սահակեանց  
22. Վարդան քահանայ Տէր-Դեռնդեանց  
Սարկաւագ Յակովիր Պարոնեանց  
Աւրաբակիր Աւետիք Պապովեանց  
,, Մարտիրոս Մարգարեանց

9, Նորացիկի ս. Աստուածածին

23. Թաղէոս քահանայ Երուանդեանց  
24. Սարգիս տւագ քահանայ Շիօյեանց  
25. Սարգիս քահանայ Խփակեանց

Աւրար Ասրդիս Շ. պամագեանց  
Անդրէաս Մովսիսեան

10, Առետեաց ս. Աստուածանին

26. Գլորդ աւագ քահանայ Երուղիեանց
27. Զաքարիայ քահանայ Զարդեղեանց
28. Ռ. ըշակ քահանայ Մինասեանց
29. Մեսրով քահանայ Տարիելեանց  
Ուրարակիր Զաքար Զաքարեանց  
Դպիր Յովհաննէս Տէր-Սարգսեանց  
,, Գրիգոր Զաքարեանց  
,, Գարբիէլ Կուրզինեանց

11, Ա, Նշան

30. Գրիգոր քահանայ Շերմագանեանց
31. Գարեգին քահանայ Առաքէլեանց  
Դպիր Դուկաս Դուկասեանց  
,, Յովսէփ Սաղաթիէլեանց

12, Տափի-Թաղի ս. Գեորգ

32. Յովհաննէս աւագ քահանայ Մարտիրոսեանց
33. Յովսէփ քահանայ Տէր-Թետրոսեանց  
Սարկաւագ Միքայէլ Տէր-Յարութիւնեանց  
Դպիր Սարգիս Յովհաննիսեանց

13, Զըկինեանց ս. Կարապետ.

34. Գրիգորիս աւագ քահանայ Երզնկեանց  
Դպիր Սարգիս Միքունեանց  
,, Բարդուղիմէոս Էփրիկեանց

14. Գերայի ս. Խաչ.

35. Գեորգ քահանայ Տէր-Աւետիսեանց  
36. Աւետիս քահանայ Տէր-Աւետիսեանց  
Աւրաբակիր Պարապետ Պալարեանց

15. Շիրանառի ս. Աստուածածին

37. Դևոնդ քահանայ Տէր-Սարդսեանց

16. Թանտի Վարդանանց ս. Ծուշանիկ

38. Գրիգորիս քահանայ Մատինեանց

17. Նաւրիսեղի ս. Գեորգ

39. Ազերսանդը աւագ քահանայ Վարդանեանց  
Դպիր Բաղրամ Դաւթեանց

18. Ա. Գրիգոր Լուսառորիչ

40. Արշակ քահանայ Յարտ թիւնեան  
Դպիր Գեորգ Մանուէլեանց

19. Շամբորեցւոց ս. Աստուածածին


41. Համազասպ աւագ քահանայ Տէր-Յովհաննիսեանց  
42. Շմաւոն քահանայ Տէր-Քարողեան  
Դպիր Տիղրան Տէր-Պալարեան  
, Մկրտիչ Յովհաննիսեան

20. Զորաբայի ս. Գեորգ

43. Գրիգոր աւագ քահանայ Մանդակունի  
Դպիր Սուրէն Պետրոսեան Յակովիեանց

21. Էջմիածնեցւոց ս. Գեորգ

44. Բարսեղ քահանայ Տէր-Քարաղեանց



45. Ներնդ քահանայ Մամիկոնեանց

46. Ներսէս քահանայ Քարամեանց  
Դպիր Ռուրէն Եղոյեան  
,, Սուքիս Սուքիսեանց

21, Ա. Մինաս

47. Սարդիս աւագ քահանայ Իզիթեանց

48. Յարութիւն քահանայ Նախեանց  
Դպիր Գէորգ Ծերեթէլեանց  
,, Յարութիւն Յարութիւնեանց

22, Խօջիվանից ս. Աստուածածին

49. Բարդուղիմէսս քահանայ Մարկոսեանց

23, Ա. Կարապետ

50. Գարրիէլ աւագ քահանայ Տէր-Գարրիէլեանց

51. Գէորգ քահանայ Սաղոյեանց  
Դպիր Խաչատուք Յարութիւնեանց  
,, Մկրտիչ Սողոմոնեանց

24. Զուդարիքու ս. Աստուածածին

52. Յովհաննէս քահանայ Խոդաշեանց

Դպիր Յովհաննէս Թամադեանց

25, Վարանցովի ս. Աստուածածին

53. Աղլքսանդր քահանայ Տէր-Յարութիւնեանց

54. Գրիգոր քահանայ Հահնապարեանց  
Սարկաւագ Սարգիս Օտեանց  
Ուրաբակիր Մարտիրոս յիմէօնեանց  
Դպիր Կարսալետ Ասլամազեանց

26, Թանդոյեան ս. Աստուածածին

55. Ներսէս աւագ քահանայ Դամազեանց

56. Սահմալ քահանայ Սահմակեանց  
57. Յարութիւն քահանայ Ճուղուրեանց  
    Դպիր Գէորգ Շերեանց  
    ,, Յարութիւն Տէր-Միմէօնեանց  
    ,, Յովհաննէս Մարգարեանց
- 

## ՏՓԽԻՍԻ ՀԱՅՈՅ ՎԻՃԱԿԻՑԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԸ

1. Առենապետ Տէր-Գարեգին Երբ-Կալիսկովոս Սալունեանց
  2. Նախանդամ Տէր Խփրեմ Ժայրազոյն վարդապետ Սուրբասեանց
  3. Ենդամներ Համագուստ աւագ քահ. Տէր-Յովհաննիսեան
  4.     ,,     Զաքարիա քահանայ Զարդեղեանց
  5.     ,,     ,,     ,,
  6. Առենապետ Մկրտիչ Աւարդազարեանց
  7. Օգնական Յառենապալրի Բենիամին
  8. Դիւանադետ Բագրատ Երվագեանց
  9. Համարակալ Յովհաննէս Խարալեանց
  10. Գրադրներ Դիկողայսոս Բաւէեանց
  11.     ,,     Աւետիք Պապովիեանց
  12.     ,,     Սարգիս Յովհաննիսեանց
  13.     ,,     Մինաս Պարսամեանց
  14.     ,,     Արշակ Շինեանց
-

Հրամանի և Խմերէթի Հայոց Վիճակային կոն-  
սիստօրիայի հրահանգիչ հրամաններ:

Հրաման Կոնսիստօրիայի 7 սեպտ. 1898 ամի. հ. 3895  
հիմնուած ս. Էջմիածնի Սինոդի հրամանի վերալ 29 Յու-  
լիսի 1898 ամի. հ. 13 08:

Հաղար ութն հարիւր իննոսուն ութը թուի հրատա-  
րակած պատժական օրէնքի 1412 յօդ. մոքի համաձայն,  
նախամասազրուած անձնասպանը զրկւում է քրիստոնէական  
ծխակատարութեամբ թաղուելուց, սակայն հրահանգու-  
թիւն չունի՝ թէ որեւէ հոգեեկան հիւանդութեամբ բռնուած  
անձնասպանին թաղել եկեղեցական հանդէսով. Ա. Աթա-  
նասի կանոններ զլ. Փ. որովհետեւ յիշեալ օրէնքի մոքի հա-  
մաձայն՝ կարելի է ինքնասպանի վերայ ս. պատրագ մա-  
տուցանել՝ եթէ միայն ինքնասպանութիւնը դործելու ժա-  
մանակ եղել է նա խելացնոր վիճակի մէջ, ուստի հրամա-  
նով պատուիրել Ռուսաստանի Հայոց կոնսիստօրիաներին,  
հարկը պահանջելու ժամանակ՝ անձնասպանին թաղել եկե-  
ղեցական ծէսով և պատրագով. եթէ միայն բժշկական  
մանըազննին քննութիւնից յետոյ՝ կյայտնուի՝ որ ինքնա-  
սպանը՝ ինքնասպանութիւնը դործելու ժամանակ եղել է  
խելացնոր վիճակի մէջ:

2

Հրաման 18 դեկտեմ. 1898 ամի. հ. 5723 Առաջա-  
դրութիւն թէմակալ Առաջնորդի 4 դեկտեմ. նոյն ամի. հ.  
486 Օրէնքի ա. մասի XI հատ. 1133 յօդուածի համաձայն  
1896 ամի.

Առենայն Հայոց վեհափառ Կաթուղիկոսը՝ Հայոց

Հայոց եկեղեցւոյ ուխտի օդապակար անդամներին վարձար-  
արում է Աանջական խաչով. Կամելաւկայ կոչուած զլխար-  
կով և Արաղջնով, բայց քահանաներից ոմանք առանց  
թոյլտութեան և Վեհափառի կոնդակի՛ կըում են իւրեանց  
զլխներին թաւշեայ արախցիններ. այլէ կան և քահանաներ  
որոնք իւրեանց վիճակաւոր Առաջնորդներից վարձատրուել  
են կիրպասեայ կապտագոյն վիլոններով. և նորանք հա-  
կառակ իւրեանց վկայագրների կըում են ծիրանագոյն՝ որ  
միանգամայն դէմ է պատուի և քահանայական համեստու-  
թեան. Աւստի այս խմացնելով թէմական Ատենիդ՝ առա-  
ջադրում եմ, որ շրջարերական հրամաններով պատուիրէք  
Հոգիոր կառավարութիւններին և բոլոր զործակալներին  
խստիր հսկել և արգելեր, որ քահանաներն չը յանդգնին  
առանց թոյլտութեան և իրաւունքի կրել իւրեանց զլխնե-  
րին թաւշեայ արաղջիններ, կամ առնուլ ծիրանագոյն վի-  
լոն. եթէ չէ զրուած նորանց վկայագրի մէջ, իսկ այն  
քահանաներն, որոնք աւելի ծերացել են, բաց զլխով՝  
մանաւանդ ձմեռուայ ժամանակ չեն կարող եկեղեցումք  
երկար մնալ, նորանց թոյլ տալ կրել իւրեանց զլխներին  
չուխայից պատրաստուած հասարակ արաղջիններ, և ոչ եր-  
բէք թաւիչից՝ հակառակ ընդունուած սովորութեան.

3.

Հրաման 28 դեկտեմբերի 1898 ամի հ. 5860. Առա-  
ջադրութիւն թէմական Առաջնորդի 17 դեկտ. նոյն ամի հ. 504  
Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսն ինձ ուղ-  
ղած իւր կոնդակի մէջ անցեալ Հոկտեմբերի 21-ին հ. 1191 պատուիրում է քահանաների տեղափոխութիւնը այ-  
սուհետեւ խալառ արգելեր, այս խմացնելով թէմական Ատե-  
նիդ առաջադրում եմ, որ շրջարերական հրամաններով պա-

տուիրէք Հոգեռը կառավարութիւններին և վլճակիս գործակալներին՝ յայտնել բոլոր քահանաներին. որ այսուհետեւ նորանց տեղափոխութիւնը խապառ արգելուած է. և ով ոք ձեռնադրուած է և արդէն կարգուած մի որ և է տեղժողովուրդը հավուելու. պէտք է այնտեղ մնայ մինչև իւր մահը. և երբէք չունի տեղափոխութեան համար հոգեռը իշխանութեանը աալ խնդիր:

4.

Կոնդակ Տ. Տ. Մկրտչիչ Ա. Վ. հավատու կաթուղիկոսի ամենայն Հայոց ի 10-ն Փետրվարի 1899 ամի չ. 194. Վերջին ժամանակներս տեսնում ենք, որ մերազնէից շատերը, որոնց նախնիքը զանազան ժամանակներում արել են ինչ ինչ բարեգործութիւններ՝ թագուած են եկեղեցեաց գաւիթներում, իրանք ինչպէս ժառ անգորդ հանգուցեալի ցանկանում են եկեղեցեաց գաւիթների մէջ՝ նորանց շարքումը ունենալ տեղ, և որովհետեւ արդէն սկզբից ննջեցեալ-ների համար կայ սահմանուած կարգ՝ թէ ո՛վ որտեղ պէտք է թաղուի. և մեր նախնիքը սակաւ բացառութեամբ մեծագործ մարդկանց և կամ բազմաշխատ եկեղեցականաց տեղ են չնորչել տաճարների հովանեաց տակ թաղուել, որոնց՝ հանգուցեալ մեծագործներն իւրեանց կենդանի ժամանակ բարերարներ են հանդիսացել, և որոնց համար եկեղեցին երգում է «Աղօրմինը եկեղեցի շինողներին, սպասաւորներին, երախտաւորներին, պտղատուններին և նորանց՝ որոնք տաճարի հովանու տակ հանդատացել են»:

Աւսափ հարկաւոր է չափ ու սահման դնել, որ ամեն մէկը իրան իրաւունք չհամարէ թաղուիլ եկեղեցւոյ գաւթումը, որովհետեւ ուրիշ է գերեզմանատունը և ուրիշ է եկեղեցւոյ գաւիթը. Եւ որովհետեւ այսուհետեւ չինի այդ-

պէս առարկութիւններ, և որիէ խնդրատու չըդիմէ կողմնակի կերպով զանագան անձերի կողմից, որից յառաջ են գալի մերժելուց յետոյ անբաւականութիւններ, սորա համար այս Հայրապետական կոնդակովս պատուիրում ենք գերապատվութեանդ, վերցնել՝ եկեղեցեաց գաւիթների մէջ՝ իւրեանց նախահայրերի կարգումը՝ ժառանդների թաղուելու այդ սովորութիւնը. և եթէ պատահեն զանցառութիւններ, այն դէսքումք Մեղ դիմել և ստանալ հրաման. թէ ում և եկեղեցւոյ ու ազգի ո՞րովախ մեծագործներին պէտք է տալ հանգատանալու տեղ եկեղեցեաց գաւիթներում. և ոչ թէ ամեն ծառայողներին և կամ անուանական ազատականներին. որով խափանել զաւիթը և դարձնել գերեզմանատուն:

5.

Հրաման. 12 Յունիսի 1899 ամի հ. 2396. Սինօդի 23-ն նոյեմբ. 1857 ամի հ. 2337. և յ30 Յունի. 1859 ամի հ. 95:

Քաղաքներումը եկեղեցեաց նորոգութեանց և շինութեանց համար, երէցփոխանները իրաւունք չունին 30 ոռորդուց աւելի. ծախը անելու, և նորանց՝ որոնց պէտք լինի նորանից աւելի դործադրելու, պէտք է ժողովրդից համախօսական առնեն, և ծախը նախահաչուի և եկեղեցւոյ ել և մտի համառօտ ցուցակովը յանձնեն Կոնսիստորիայի կարգադրութեանը:

6.

Հրաման 15 Սեպ. 1899 ամի հ. 3934.

Եկեղեցւոյ կնիքը որի՞ մօտ պէտք է պահպանուի, և ծննդական քաղուածներ տալու ժամանակ ի՞նչպէս պետք է վարուիլ: Արդ՝ ինչպէս եկեղեցական կնիքը, նոյնպէս արձանագրական մատեանները և միարանութեան անունով պաշտօնա-

կան թղթերը պէտք պահպանուին եկեղեցւոյ Աւագ կամ ժամօրհնող քահանայի մօտ նոյն եկեղեցումբ և ոչ տանը, իսկ միաբան քահանաներն իւրիանց ծխերին ծննդական քաղցւածներ առլու ժամանակ պարտաւոր ևն նորան դրօշմել աւագ քահանայի գիտութեամբ:

7.

Հրաման 12-ն Մայիսի 1900 ամի Հ. 2091. Կոնդակ  
23 Մարտի նոյն ամի Հ. 293.

Ե լրումն մեր կոնդակի որ ուզգել եմ թէմիդ Առաջնորդ Տէկորդ Արք-եպիսկոպոսի անունով. 24 փետրվ. ներկայ ամի Հ. 178: Եյս կոնդակովը յայտնում ենք, այն դէպքումը՝ եթէ կոնդակութիւնու մասուցած խնդիրներն ունենան ազդակցական չհասութեանց վեցերորդ ասահճանի խորդութիւն՝ ընդունել և ուղղակի մասուցանել Մեզ՝ և ոչ Սինօդին, իսկ խնամքական չօրբորդ աստրձանի չհասութիւնը՝ եթէ պատուհեն երկու խնամքութեանց մէջ՝ ընդունել և առաջարկել Սինօդին:

8.

Հրաման 5 Գեկտեմ. 1901 ամի Հ. 5971. Քահանաներն առանց բացառութեան երեկոյեան և առաւօտուն ժամերգութեանց և ո. պատարազին պէտք է յանախեն եկեղեցի, ոչ որ չպէտք է համարձակուի բացակայել. եթէ չունենայ յարգելի պատճեն, քահանաներից ոմանք իւրիանց պաշտաման պարագից խոյս են տալի, առաջ բերելով հերթակալութիւն՝ որ նորամուծ և անտեղի սովորութիւն է: Աւագ և ժամօրհնող քահանաներն պէտք է ամենայն ձըշտութեամբ կատարեն իւրիանց պարտքը, հսկեն միաբան և միուս պաշտօնեաների իւրիանց պաշտօնի անթերի կատար-

ման և եկեղեցի յաճախելու մերայ, զանցառուների ցուցակը երկու շաբաթը միանգամ յայտնել դորձակալին։

9.

Հրաման. 6 Մարտի 1902 ամի և 967. Ապօրինի կոչուած մանուկների ծնունդը և մլլատութիւնը տրձանագրական մատեաններում մուծելու մասին, հրահանդութիւն տալ, որ քահանաներից ոչ որ մանուկների ծնունդը և մլլատութիւնը արձանագրական մատեաններում մուծելու ժամանակ, օրինաւոր պատկից ծնուածները՝ որ արդարեւողել է, լսու իւր դաստութեան զրէ նորանց կարգուած «ապօրինի ծնունդ» որտեհատեւ ապօրինի մանուկների ծընունդն իմանալը՝ կախվում է դատաստանական վճռիթ. իսկ այրիներից և աղջիկներից ծնուածներին՝ նոյնավէս մուծանելու ժամանակ չգրել «ապօրինի» բառը, այլ միայն ցոյց տալ ծնող-մայրերի անունները և տոհմանունները։

10.

Հրաման. 15 Նոյեմ. 1903 ամի և 4979. Կոնդակ 30 Հոկտեմ. նոյն ամի և 1213; 15 Հոկտեմ. 1899 ամի և 1178. Զեր գերազնորհութեանն ուղղած մեր կոնդակով՝ Հայ քահանաների միջոցաւ Մուս լեզուով երդման խնդրի վերաբերութեամբ Մենք յայտնեցինք, եթէ առինք Մեր բացատրութիւնը նորին բարձր Գերազանցութեան ներքին գործոց տէր նախարարին. յայտնելով թէ «Երջանկայիշտառակ Մակար կաթուղիկափ հրաման վերցնելը՝ ապօրէն կլինէր հակառակ Հայաստանեաց եկեղեցւոյ նախաւանդ կանոնների, իմ խոյժի, և իմ կրօնոկան զգացմոնքներին կղիպչին. որ միշտ չերմեռանդ հոգառակ է Խուսիոյ մոծ Ինքնակալներին։ Աշմամ մեր նախույն կոնդա-

կը երկը որդելով՝ յայտաբարում ենք, եթէ երդումը լինելով  
ըստ էռթեան Հոգեոր ծէս, և ըստ նշանակութեանն՝ ահա-  
ւոր խմաս. քահանաները պարտաւոր են պահանջման դէպ-  
քումը՝ միայն մեր կանոնական լեզուով երդութցնել, որով՝  
թէ եկեղեցումք և թէ արտաքոյ եկեղեցւոյ կատարւում են  
մեր ըոլոր Աստուածաշտութեան կարգերը:

11.

Հրաման. 28 Ապրիլի 1904 ամի Հ. 1477: Գործա-  
կալներին տուած է իրաւոնք տալ իւրեանց գործակալու-  
թեանց պատկանած քահանաներին զրաւոր արձակուրդ  
եօթնօրեայ ժամանակաւ, զնալու 30 վերաս հեռաւորու-  
թեամբ որևէ աեղ. նորանից աւելի զնացողը՝ պէտք է զի-  
մէ թէմակոլ Առաջնորդին և նորանից ստանայ անցա-  
թուղթ:


12.

Հրաման. 26 Յուլիսի 1904 ամի Հ. 2888. Զինուո-  
րագուութեան 115 յօդ կանոնների զօրութեան համաձայն՝  
իւրաքանչիւր ոք 16 ամեայ հասակից մինչև 20 տարին լր-  
րանալը, պարտաւոր է զինուորական Ատենիցը ստանալ  
վկայական՝ իւր անունը մոցնելու զինուորագրութեան  
ցուցակումք. իսկ 182 յօդ. համաձայն, այն բոլորին՝ որոնք  
մասնակցել են վիճակահանութեան՝ նոյն Ատենից կտան  
առանձին վկայական: Եւ այս վկայականները 185 յօդ.  
նոյն կանոնների զօրութեան համաձայն, նորանք պարտա-  
ւոր են ամուսնութիւն մոնելու ժամանակ՝ առաջարկել.  
ուստի ի նկատի ունենալով վերոյիշեալ զինուորագրութեան  
կանոնները, պսակի հրաման տալու ժամանակ անշուշտ  
պահանջել, որ ծխական քահանայք իւրեանց յայտաբարու-

թեանց հետ պսակելի անձանց զինուորագրական վկայականն էլ մատուցանեն, յլ չելով յայտաբարութեան մէջ վկայականի ամսաթիւը և համարը, որը համեմատելուց յետոյ վերադարձնել տիրողը:

13.

Հրաման. 2 Օգոստ. 1904 ամի Հ. 2953. Քահանաներն ս. պատարագի խորհուրդի վերաբերման ժամանակ՝ պէտք է ծուցուրար ձգեն և այնպէս կացդան ս. Աւետարանը և կատարեն վերաբերումը:









Տ. Գարեգին Արք-Եպիսկոպոս Մաթունեանց թէժակալ  
Առաջնորդ Հայոց Վրաստանի և Խճեռէթի կարգեալ ի 26 Սեպ. 1904 ա.

14.

Հրաման. 24 նոյեմ. 1904 ամի Հ. 4887 Սինօդ. 27 Հոկտեմբ. նոյն ամի Հ. 1367: Օտար դաւանութեանց Հոգեոր գործոց գեպարտամենտի 25 Հոկտեմ. 1904 ամի Հ. 2845. Ռուսահպատակները, որոնք ցանկանում են գերմանից սահմաններում պատկուիլ, պէտք է ծխական քահանայից վկայական ունենան, որ պատկուղին չկայ օրինական արգելք, պատկը համարվում է վաւերական այն ժամանակ՝ երբ կատարվում է նոյն դաւանութեանը ծեսի համաձայն, որին պատկանում են պատկուղներն, ուստի արտասահմանում պատկուղը պէտք է ճիշդը յայտնէ. թէ ո՞ր դաւանութեանն է պատկանում, որի հետ կամնենում է պատկուիլ, այս պատճառուած՝ քահանաները պէտք է յայտնեն Ռուսահպատակներին, թէ արտասահմանում կատարուած պատկը՝ Ռուսաստանում վաւերական կհամարուի այն ժամանակ, երբ կատարուած կլինի նոյն դաւանութեան կանոններին համաձայն, որին իրանք պատկանում են:

15.

Հրաման. 27 նոյեմ. 1904 ամի Հ. 4934. Առաջադրութիւն 10 նոյեմ. նոյն ամի Հ. 131: Սինօդ. 3 նոյեմ. նոյն ամի Հ. 1403: Ըստ դէպքեր են լինում, որ ամուսնութիւն մտնողները վեներական ախտով վարակուած լինելով. ամուսնութիւնից յետոյ վարակում են իրանց կինակցուն, և լինում են քայլայման պատճառ իրանց և իրանցից ծնուած զաւակների առողջութեանը. ուստի այսուհետեւ ամուսնութիւն մտնողներն պէտք է ունենան իրանց առողջութեանց համար՝ բժշկի վկայական, և այնպէս դիմեն կոնսիստորիայն պատկի հրաման ստունալու:

16.

Հրաման. Յ. Գեկտեմբերի 1904 ամի Հ. :  
Սինօդ. 26 Նոյեմ. նոյն ամի Հ. 1527. Կոնդակ 4 Յունի.  
1902 ամի Հ. 4: ա) Ազգականութեան 5-րդ, խակ խնա-  
մութեան 4-րդ աստիճանի կատարուած պատկը՝ անվակիք  
համարել. և պատկող քահանային և պատկուածներին  
տալ մարմնուոր իշխանութեանք: բ) Ազգականու-  
թեան 5-րդ և 6-րդ աստիճանի խնամութեան 4-րդ  
աստիճանի պատկը անժոյացրելի համարել. կատարուած  
պատկը համարել վաւերական. խակ պատկողին և պատ-  
կուածներին ենթարկել խիստ պատժի. բայց եթէ քահա-  
նայն դիտակցարար է կատարել ազգականութեան 5-րդ  
աստիճանի պատկը, նորան ենթարկել եռամենայ գաղար-  
ման քահանայագործութիւնից և ուղարկել վանքերը ապաշ-  
խարութեան, խակ անդիտութեան դէպքումը՝ վեց ամսեայ  
ապաշխարանաց, այլ և պատկուողներին ենթարկել վեց  
ամսեայ ապաշխարանաց տեղական նկեղեցումը: գ) Ազգա-  
կանութեան 6-րդ աստիճանի պատկողին՝ ենթարկել մի և  
կէս ամենայ ապաշխարանաց՝ վանքերումք, անդիտութեան  
դէպքումը՝ եռամենայ ժամանակու, խակ պատկուողներին  
նոյն չափով եկեղեցումք: դ) Խնամութեան 4-րդ աստի-  
ճանի պատկը կատարողին՝ ենթարկել մի և կէս ամենայ ա-  
պաշխարանաց:

17.

Հրաման. 31 Կեկտեմ. 1904 ամի Հ. 5507. Սինօդ.  
Յ. Գեկտեմ. նոյն ամի Հ. 1565.

Քահանացք անտեղեակ լինելով՝ ամուսնութիւն մրա-  
նողների հասակը՝ անչափահասներին պատկում են և ընկ-  
նում օրէնքի պատասխանատութեան. ուստի ամուսնու-

թիւն մտնողներից պէտք է պահանջեն նորանց ժննդեան աղուածքը, արձանագրական մատեանից, որը օրինական շափահասութիւնը ստուգելուց յետոյ՝ թոյլ տալ նոցա պատկը:

18.

Հրաման. 28 Յունվ. 1905 ամի. Հ. 150. Առաջա-  
մբութիւն 29 դեկտեմ. 1904 ամի Հ. 182:

ա) Աւագ քահանայի պարտաւորութիւնն է եկեղեց-  
ւոյ զարդուց և սրբագան անօթոց վերայ հսկել անկորուստ  
պահպանելու համար, այլ և հսկել՝ որ միարան քահանա-  
ներից որ և է մէկը իրաւունք չունենայ պահել իւր տանը  
եկեղեցւոյ դիազարդը, շուրջառը և դիպակը, այլ և չըն-  
դունել այն պատճառը՝ որով արդարացնում են իրանց,  
թէ ժողովուրդը իրանց է ընծայել:

բ) Աւագ քահանայի պարտաւորութիւնն է երեսփո-  
խանի բացակայութեան ժամանակ ի դարձին յիշել նորան  
նուիրած դիպակների և ուրիշ զարդուց համար, և թէ  
միարաններից որի՞ մօտն է գտնվում նուիրածը, նորանից  
առնել և յանձնել երեսփոխանին, որպէս եկեղեցական գոյ-  
ից և ընչից հսկող և պահող:

գ) Երէսփոխանները պէտք է ունենան ժապավինած  
մատեան, որ աւագ քահանայի և միարանների ներկայու-  
թեամբ զրեն եկեղեցւոյ զարդերը, անօթները, դգեստնե-  
րը, դիազարդները, և այլ իրերը յօդուած առ յօդուած,  
այլ և ստուգել և կորածը գտնել, որից պէտք է:

դ) Եթէ առանց աւագ քահանայի գիտութեան՝ եկե-  
ղեցուց մի բան տարած լինին, նախ տանողից պահանջել-  
և եթէ պահանջը չարգուի, անմիջապէս յայտնել լինա-  
կային Վատենին:

ե) Երեսփոխանները պէտք է միշտ հսկեն, թէ ինչ-

պէս զիազարդներ և ուրիշ նուէրներ են բերվում ժողովում ժողովում նուրդներից, գըել մտից մատենումը, քահանաների համար շուրջարներ կարել տալ և չափիկներ սարկաւագների և դպիրների համար:

զ) Երեսփոխները պէտք է այժմէն խակ ժողովեն շուրջարները և զառերը՝ եթէ գտնուում են քահանաների մօս և խնամքով պահեն խորանումը և ըստ կարգադրութեան աւագ քահանայի՝ որոշակի դործադրեն ամենօրեայն և հանդիսաւոր տօներինը:

է) Երեսփոխները պէտք է ունենան եկեղեցումը պատրաստի զիազարդեր, չունեորների համար՝ հարկաւոր դէպքումը դործ դնել:

ը) Միաբան քահանաները պարտաւոր են ծխերից նուիրած զիազարդերը և ուրիշ ընծաները յանձնել երեսփոխնեն, և նորանից ստանալ ստացագիր և երեսփոխներ պարտական է ստացածները անմիջապէս զրել մատենումը:

թ) Միաբան քահանաներն պարտաւոր են, եթէ իրանից մէկը այս կարգադրութեան հակառակ եկեղեցուց որևէ գոյքը իւր մօտը պահէ, անմիջապէս յայտնել աւագ քահանային, իսկ հակառակ դէպքում յայտնել երեսփոխնեն. եթէ երկոցունց ևս չսէ՝ այն դէպքում յայտնել Ռատենին:

ժ) Փահանաներն զիտութեամբ աւագ քահանայի կարող են իւրեանց տանն ունենալ մի շուրջառ և մի ծոցուրար, որ ի ժամու և ի մէջ զիշերի դործադրեն ժողովրդի պատահած հոգեոր դէպքերումը:

Լավում է, որ գիւղական քահանաներն առանց հոգիոր իշխանութեան թոյլտութեամբ՝ ծածուկ չուտ չուտ քաղաք են գտի, և բոլոր օրինակատարութեանց մասնակցում. իսկ իրանց յանձնուած ժողովուրդներն զրկում են Հոգեոր միսիթարութիւնից. հակառակ հանգուցեալ Գէորգ Դ. Հոգելոյս կաթուղիկոսի սրբատառ կոնդակի, որով աւագ քահանաներին պարտաւորեցնում է հսկել այդպէս անկարգութիւններին, նորանց արգելեն՝ որ առանց թէմական իշխանութեան հրամանի՝ իրաւունք չունենան իւրիանց տեղիցը բացակայելու ուրիշ աեղ և մասնակցել որ և է օրինակատարութեան, ուստի առաջադրում եմ կոնսիստօրիայիդ հրաման զրել քաղաքիս եկեղեցեաց գործակալներին, որ երբէք թոյլ չտան քաղուք եկող քահանաներին մասնակցելու որ և է օրինակատարութեան և եկեղեցիներումը պաշտօնավարելու. չսողներին իսկոյն ևեթ պաշտօնապէս յայտնել թէմական իշխանութեանը:

20.

Հրաման. 25 Ապրիլի 1905 ամի Հ. 2038. Կոնսիստօրիայն պատուիրում է քահանաներին և երեսփոխաններին, որ 1902 թուի Հոկտեմ. 10 հրամանի համաձայն. Հոգեհանգիստ կատարած ժամանակ՝ բոլոր կիսայրեալ մամերը՝ թէ դիասեղանի և թէ ժողովրդին բաժանած՝ պատկանում են եկեղեցուն:

21.

Հրաման. 17 Գեկտեմբ 1905 ամի Հ. 4979. Սինօդ 7 Հոկտեմ. նոյն ամի Հ. 1001.

Նորանք, որոնք ցանկանում են Ռուս ուղղափառ դաւանութիւնից դառնալ Հայաստանեայց Լուսաւորչական եկեղեցւոյ ծոցը՝ ըստ բացատրութեան Յանձնաժողովոյ

նախարարաց), պէտք է անմիջապէս խնդրագրով գիրմեն տեղական նահանգապետին և կամ դաւառական իշխանութեան միջոցաւ: Իսկ Հայոց դաւանութիւնը ընկունողներին տանել Եկեղեցի Սիզանի հանդէպ ծունկի վերայ չոքեցնել. քահանայն պէտք է ասէ «Հայր մերը» յետոյ դպիրները փոխ առ փոխ տաեն ։ սաղմոսը «Աղորմեան ինձ Աստուած» յետոյ կարդան Խոյեայ Մարգարէի զլ. Կ. 21. «Եւ կատարեցին աւուրք սկո» քո», յետոյ Պօղոսի Երբայեցւոց թղթից զլ. Փ. համար 19. «Աւնիմք այսուհետեւ եղբարք», ասդա Ալելուիս ալէլուիս. Սաղմոս «Որպէս փափագի եղջերու յազրերս ջուրց» մի տուն. յետոյ Դուկասու զլ. Ե. համար 36. Աւետարանը «Եղաչէր զնամն ի Փարիսեցւոցն.» յետոյ ապաշխարողաց արձակելու Աւետարանը. (Այս բարորը ճաշոցի մէջ Աւագ հինգշաբաթու կարգումն է բաց և տես). աղօթքը կարդա կիսիցը «իսակաղութիւն ամենեցուն. և Արդ տէր Աստուած մեր բարերար և բազմազութ» Վերջը քահանայն կամ դաւանողը պէտք է ասէ „Խոստովանիմք և հաւատամը ամենակատար սրտիւ «(ժամագրքի սկզբումն է) Յետոյ «Պահապանի» և «Հայր մեր»: Պաւանողը կիանդնի ոտքի. և ս. պատարագը կոկուի:

22.

Հրաման. 26 Յունի. 1906 ամի Հ. 419:

- ա) Աւագ և կամ միարան քահանայը՝ իրանց եկեղեցւումը պէտք է ունենան մը մատեան «Եկեալ թղթոց» որ Հոգեոր իշխանութիւնից ստացած հրամանները, կարգադրութիւնները և պատուէրները գրեն նորա մէջ,
- բ) Գործակալները ամէն տարի մի մի ժապաւինեալ մատեան տան եկեղեցեաց «Եկեալ թղթերի սեալլութիւն-

նելը. «Եկեալ թղթոց» հրամանների հետ պահպանուին  
եկեղեցւոյ «Դիւանումը» Աւագ քահանայի հակողութեամբ:  
դ) Եւրաքանչիւր եկեղեցի պէտք է ունենայ «Ար-  
ձանագրական» մատեանների պատճենը աւագ և միարան-  
քահանանների ստորագրութեամբ վաւերացրած: և  
դ) Եկեղեցւոյ հաշուէմատեանների պատճենը՝ երես-  
փոխանի ստորագրութեամբ վաւերացրած:

23.

Հրաման, 13 Սեպտեմ. 1906 ամի Հ. 3669. Սինօդ  
2 Օդօս. նոյն ամի Հ. 1488:

Երբ որ թոյլտութեան համար միջնորդութիւն կլինի  
Օրթօդոքս և ուրիշ դաւանութեանց ծնողաց զաւակները  
մկրտելու Հայոց եկեղեցւոյ ծէսով, մկտրուողների մինչև  
14 ամեայ հասակը՝ ծնողաց զրաւոր խնդրանաց համաձայն  
անարգել թոյլատը մկրտելու:

24.

Հրաման, 31 Հոկտեմ. 1906 ամի Հ. 4368. Սինօդ.  
13 Սեպտ. նոյն ամի Հ. 1812:  
Ոռուսադաւանը եթէ կամենաւմ է՝ առաջ պէտք է ընդունէ  
Հայոց դաւանութիւնը, և յետոյ կարող է պսակուիլ Հայոց  
եկեղեցումը, հակառակ դէսքրում պէտք է զեկավարուի  
1576 յօդ. օրինաց խմաստի համաձայն:

25.

Հրաման, 27 Գեկտեմ. 1906 ամի Հ. 6022. Կոնդակ  
Ահճափառ Հայրապետի 30 նոյեմ. նոյն ամի Հ. 1582, և  
1 Յունի. 1907 ամին Որով չնորհաւորում է բոլոր Հո-  
գեոր Կառաւարութեանց և գործակալներին պսակելու թոյլ-  
տութիւն ազգականութեան՝ եօթներբորդ, խնամութեան

հինգերորդ՝ և կնքաւորութեան՝ երրորդ աստիճանը, որով-  
չետև ըստ ճիւղագրութեան ներսէս Ե-բղիս Սանիկը՝  
կնքահօր որդւոյ հետ եղայլը է համարվում, և սորանց  
ազգականութիւնը՝ թէ ըստ հոգեորի և թէ ըստ մարմնա-  
ւորի կշարունակուի մինչև երրորդ ծնունդը, իսկ եղայլ-  
ները և քոյլերը և ուրիշ կողակիցները սանահօր և սանի-  
կի չունին կընքաւորական արգելման որևէ չաղկապ.

26.

Հրաման. 31 Յունի. 1907 ամի Հ. 315. Սինօդ. -29  
Դեկտեմ. 1906 ամի Հ. 2697:

Հրամանգ քահանաներին, որ անարգել լնդունեն  
Հայոց ս. Եկեղեցւոյ դատանութեան մէջ՝ ըստ գրաւոր  
խնդրանաց այն ցանկացողներին՝ որոնք քրիստոնեայ չեն  
և որոնք պատկանում են ուրիշ դաւանութեանց, բացի այն  
անձերից՝ որոնք պատկանում են Օրթոդոքս դաւանու-  
թեան. և որոնց նկատմամբ պէտք է զեկավարուիլ ս.  
Էջմիածնի Սինօդի 7 Հոկտեմ. 1905 ամի թ. 1001 հրա-  
մանի համեմատ. Տես էջ 35 Հ. 21.

27.

Հրաման. 2 Վետրվ. 1907 ամի Հ. 353: Ըստ գօ-  
րութեան 1025 յօդ. XI I մասին օրինաց. բոլոր Եկեղե-  
ցիները պէտք է ունենան ժապավինեալ մատեան՝ որ նո-  
րս մէջը ճիշտ և անսխալ և մանրամասն զրեն, Եկեղեցւոյ  
անշարժ կայքերը, զարդերը, անօթները և պահեն Եկե-  
ղեցւոյ դիւանումը,

28.

Հրաման 17. Հոկտեմ. 1907 ամի Հ. 3943:

Հայոց դաւանութիւնը ընդունող ուղղափառ և ու-

րիշ քրիստոնեայ անձանց անունները՝ չէ հարկաւոր մուծել արձանագրական մատենում, քանի որ նորանց վերայ չէ կատարվում մկրտութեան խորհուրդ, այլ միայն պէտք է կոնսիստօրիային զրաւոր տեղեկութիւն տալ ընդունելու վերաբերութեամբ ապագայի հարկաւորութեան համար։ Իսկ Մահմէդականներին և Հռէից անունները պէտք է մուծել արձանագրական մատենումը, որովհետեւ նորանց վերայ կասարվում է մկրտութեան խորհուրդ։

29.

Առաջադրութիւն Թէմակալ բարձր Սրբադան Առաջնորդի 15-ն Մարտի 1907 ամի Հ. 371.

Վանաց աւագ եկեղեցւոյ թանգարանի կրօնապատմական Վարչութիւնը ի տէր հանգուցեալ Աւետիս Բ. Դուկասեանցի կտակի համաձայն Խարիլի 7-ին բաշխելու է Հայ Լուսաւորչական դաւանութեանը պատկանող երեք չափ չքաւոր ամուսնացող օրիորդներին վիճակահանութեամբ օժիտ։ և նոյն դաւանութեանը պատկանող կարօտ ընտանեաց միանուագ նպաստ, այս առթիւ քահանայք պարտաւոր են իրանց ծխերի միջից ամենաչքաւոր ընտանեաց և ամուսնացող օրիորդների անունները ցուցակագրել և յանձնել յիշեալ վարչութեանը։

30.

Հրաման 21 Մարտի 1907 ամի Հ. 922.

Գիւղերի քահանայք չունին իրաւունք դալ Տիփիս և ննջեցելոց յուղարկաւորութեանցը մասնակցելու։ և կամ կատարելու որ և է հոգեոր սպաշտոն՝ առանց հրամանի թէմակալ Առաջնորդի, նոյնպէս քաղաքիս քահանաները չունին իրաւունք հրաւիրել զիւղերի քահանաներին՝ իրանց ժողովրդների հոգեոր պէտքերը կատարելու համար։ Իսկ

որովհետև Յովհաննէս քահանայ Նաւթիկեանցը ունի քաղաքումս 66 ծուխ. և 1901 թուի Հոկտեմբերի 22-ից Հ. 4542 ունի կոնսիստօրիայից իրաւունք հովուելու քաղաքումս իւր ծխերը. նոյնպէս Գալուստ քահանայ Թանդիկեանցին ունի քաղաքումս 65 ծուխ, այս պատճառաւ, այս երկու քահանաներն ունին իրաւունք իրանց ծխերի հոգնոր պէտքերը հոգալու. և քաղաքումս օրհնելու նորանց դերեղանները:

31.

Հրաման. 19 Նոյեմբ. 1907 ամի Հ. 4249. Առաջադրութիւն 25 Հոկտեմբ. նոյն ամի Հ. 1103.

Եյսուհետև երեսփոխանները առանց որոշման ծխական հոգարարձութեանց՝ չստանան դրամաններից եկեղեցւոյ դրամները և իրանց յանձնուած եկեղեցեաց համար՝ բատ տնտեսական մասին անել կարգադրութիւն, իսկ որտեղ չկայ Հոգարարձութիւն, առանց որոշման ծխական ժողովոյ՝ համաձայն յօդուածի ժամանակաւոր կանոնների

32.

Հրաման. 15 Մայիսի 1008 ամի Հ. 1526.

Պատկը կըկատարուի Ռուսաց եկեղեցումը երրոր Հայը պսակուի Ռուսադաւանի հետ. Այսպիսի պսակից ծնուածը՝ պէտք է մկրտեն Ռուսաց եկեղեցումը, որովհետև ծնողներից մէկը Ռուսադաւան է:

Եթէ Ռուսադաւանն էլ ընդունէ Հայի դաւանաւթիւնը՝ այն ժամանակ 1—14 տարեկանը կմլրտուի Հայոց եկեղեցումը. իսկ 14 տարեկանից բարձրը կմնայ Ռուսադաւան՝ մինչև կատարեալ հասակը, այն ժամանակ ինքը կարող է ընտրել դաւանութիւնը իւր ցանկութեանը համաձայն:

33.

Հրաման, 6 օգոստոսի 1908 ամի Հ. 2743: Սինօդ  
և Յունիսի նոյն ամի Հ. 1528.

Ամուսնալուծութեան խնդիրներն՝ որոնք վերաբեր-  
վում են անբարոյականութեան և ապօրինի կենակցու-  
թեան՝ ազատ են սահմանուած դրօշմանչից (մարկայից)  
իսկ դրօշմանիչ պահանջվում են ամուսնալուծական այն  
խնդիրներին՝ որոնք վերաբերվում են գժտութեան, բացա-  
կայութեան, անընդունակութեան և այլ պատճառների  
համար:

34.

Առաջարդութիւն 28 սեպ. 1908 ամի Հ. 757. Ե-  
կեղեցական ծխական Հոգաբարձուներից ոմանք, թիւրի-  
մացութեամբ եկեղեցական կալուածների արդիւնքը չեն  
մտցնում կոնսիստօրիայից ուղարկուած եկեղեցւոյ մատե-  
նում, այլ մտցնում են դպրոցական և ել և մտից մատե-  
նում, և գործադրում են դպրոցի պէտքերին, ուստի պա-  
տուիրում ենք բոլոր երեսփոխաներին, որ եկեղեցեաց ար-  
դիւնքը մտցնեն վիճակային Ատեանից իրանց տուած մա-  
տեանումը. և ժամանակաւոր կանոններին համաձայն՝ նա-  
խահաշիւ կազմեն, թէ չեկեղեցին որքան նպաստ տալու է  
դպրոցին, և նախահաշիւը թէ մական իշխանութիւնից հաս-  
տատելուց յետոյ, հոգաբարձուի ստորագրութեամբ յօդուա-  
ծի ստորև յանձնէ Հոգաբարձութեանը: Այն երեսփոխան-  
ներն՝ որոնք այս կարգադրութեանը զանցառութեամբ  
կվերաբերուին՝ օրէնքի առաջ պատասխանատու կհամա-  
րուին: Որովհետև չկայ օրէնք, որ իրաւունքի տիրոջը մի  
կողմ թողնելով իրանց հանոյքի համեմատ կարգադրութիւն  
անեն. մինչդեռ կալուածքը եկեղեցւոյ անունովն է, պէտք

է կալուածքի արդիւնքն էլ այն եկեղեցւոյ մատենումն արձանագրեն, և այնտեղից տան նպաստ՝ իւր հովանեաց ներբռոյ բացուած դպրոցին, ծխական ժողովի որոշման համաձայն; Երեսփոխաններն և եկեղեցական Հոգարաքութիւնը պէտք է ի նկատի ունենան, որ եկեղեցեաց մատեանները տարեց տարի ուղարկվում են Կոնսիստորիային տեսնելու և քննելու համար, ոչ ասպաքէն այդպիսի մատենավարութիւնը յառաջ կրերէ շփոթութիւն և թիւրիմացութիւն, և դորանց առաջն առնելու համար՝ իւրաքանչիւրը պէտք է իւր տեղումը արձանագրէ, որով կարգադրութիւնները պահպանուին գործալիքութեան մէջ:

35

Առաջադրութիւն 14 Հոկտեմ. 1909 ամի Հ. 1259. ի նկատի ունենալով ժամանակի անհաճելի հանգամանքները. և իրերի փափկանկատ գրութիւնը պատուիրում ենք որ քաղաք եկող օտար չողեռականներին թոյլ չտալ քարոզել ձեր շրջանի եկեղեցիներում, ով ոք և իցէ առանց նախապէս Մեղանից հաւանութիւն առնելուց:

36.

Առաջադրութիւն 30 Յունի. 1909 ամի Հ. 151.

Պատուիրում ենք ոք քահանաները՝ մլրտութեան, պսակի և թաղման խորհուրդը կատարելուց յիտոյ՝ անմիջապէս արձանագրեն չափարերական մատեաններում, զանցառուններն կենթարկուին եկեղեցական ապաշխարանաց կամ դրամական տուգանաց.

37.

Հրտման. 13 Նոյեմ. 1909 ամի Հ. 4747. Սինօդ 20 Յուլիսի նոյն ամի Հ. 1775.

ա) Վանքի վանահայրը, կամ եկեղեցւոյ երեսփոխա-

նը կաղմելու է շարժական գոյքի առանձին մատեան, որի մէջ՝ առաջին և երկրորդ թերթի տեղը կրոնէ դրամագլախի տպած թերթը, (կոնսիստօրիայից յանձնած)։ երրորդը՝ իրեղէնի թերթը, որից յետոյ կարիվում է սովորական թուղթ այնքան՝ որքան կարեոր կլինի իրեղէնները ցուցակագրելու ապա մատեանը կաղմել է տրվում։ Ժապաւինվում և ուղարկվում կոնսիստօրիայն, որը վաւերացնում է դործադրելու համար։

բ) Ցուցակագրութիւնը վանքումը կատարում է վահանացը՝ միարանների ներկայութեամբ և մասնակցութեամբ։ Եթէ միարաններ չկան չրաւիրվում են շրջակայգիւղերից։

գ) Ցուցակագրութիւնը եկեղեցումը կատարում է երեսփոխանը ծխական Հոգաբարձութեան բոլոր անդամների և եկեղեցւոյ բոլոր քահանաների ներկայութեամբ և մասնակցութեամբ։ (Մատեանները չփչացնելու համար կարելի է նաև սեազրութիւն կաղմել)։

դ) Ցուցակագրվում են նախ՝ եկեղեցւոյ ներսի որբարական անօթները, յետոյ միւս իրերը և ապա գրափիրեղները, նպարեղէնը և անասունները որքան կարելի է մանրամասն։

ե) Ուկեայ և արծաթեայ իրերը պէտք է գնահատել մասնագէտ վարպետների ձեռքով։

զ) Ցուցակագրութիւնը աւարտելուց յետոյ մատեանը ստորագրում են բոլոր ներկայ եղողները, մատեանը մնում է երեսփոխանի կամ վանահօր մօտ, որը մաքուր արտագրելով ամբողջ մատեանը, այդ երկրորդ օրինակը մասնակցողների բոլորի ստորագրութեամբ ուղարկվում է Կոնսիստօրիայի միջոցաւ Սինօդ։

է) Նոր գնած իրերը պէտք է մտցնել մատեան, կո-

րած և վիշացածների մասին պէտք է ծանօթութիւններումը դրել և վաճառումների մասին նշանակել վերեսում յիշատակուած անձանց ներկայութեամբ:

38.

Հրաման. 18 նոյեմ. 1909 ամի Հ. 4948. Սինօդ. 4 նոյեմ. նոյն ամի Հ. 2586. Սինօդը՝ դաւանափոլմների վերաբերութեամբ շրջարերականի փոփոխման համաձայն՝ 29 Դեկտեմ. 1906 ամի Հ. 2696—2701.

Հրամայում է, որ նախ՝ ըստ 6 յօդ. 15 XI հատ. (ըստ շարունա. 1906 ամի) Օտար բրիտանեայ դաւանութեան պատկանած այն անձերն՝ որոնք ցանկանում են մտնել հայաստանեայց եկեղեցւոյ ծոցը, պարտաւոր են խնդրագրով դիմել նահանգապետին և նորանից ընդունել զրաւոր թոյլտութիւն որը խնդրագրով կտայ գործակալին, և նա հրաման կցը ծխատէր քահանային, և խնդրատուին կընդունէ Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեան մէջ, հանգուցեալ Հայրապետի կոնդակի համաձայն 16 Յուլիս 1905 ամի Հ. 571. Խոկ Մահմէդականների և Հեթանոսների Հայոց եկեղեցւոյ ծխառվ մլրտւելու խնդիրը՝ պէտք է հասցնել Սինօդի կարգադրութեանը:

39.

Հրաման. 30 նոյեմ. 1909 ամի Հ. 5076. Սինօդ. 13 նոյեմ. նոյն ամի Հ. 2702:

Եյսուհետեւ Կոնսիստօրիայն՝ Հայաստանեայց եկեղեցւոյ ծոցը մտնել ցանկացող Հրէից խնդիրն ունի կարգադրել ըստ ճիշտ մասց 7 յօդ. 1 մ. XI հատ. ժող. օր. և նորա հետ կցուած կանոնների համաձայն, և ամեն նուագում իւրաքանչիւր մլրտուած Հրէի համար՝ տալ Սինօդին տեղեկութիւն:

40.

Առաջա, 9 Հունիս. 1909 ամի Հ. 1197.

Կոնդակ Վեհափառ Հայրապետի 5 Հոկտեմբ. նոյն  
ամի Հ. 105.

Հայրապետական Գահը բարձրանալու օրից՝ նկա-  
ռում ենք, որ ժողովուրդները կերպ կերպ և բազմաթիւ  
խնդիրներով դիմում են մեզ և աղաչում կատարումն իրանց  
խնդիրներին. որոնցից մէկը պատկի թոյլտութեան համար  
է, միւսը ամուսնալուծութեան, մի ուրիշ՝ պատկալուծու-  
թեամբ զրկուած լինելով պատկի իրաւունքից՝ խնդրում է  
իրաւունք կրկին պատկուելու, մի ուրիշը ձեռնադրութիւն  
ընծայացուներին՝ քահանայ. այլ և բոլոք հոգեորականնե-  
րից և այլ բազմաթիւ առարկաների և խնդիրների վերաբե-  
րութեամբ որոնց նոյն իսկ իրանց տեղումը ստուգելու համար՝  
բարւոք իմ համարում խնդիրնները վերապարձնել Առաջնորդ-  
ներին և կամ Կոնսիստօրիաներին, որ կրկին Մեզ մատու-  
ցանեն տեղեկութիւններով և իրանց եղբակացութեամբ, և  
այս պատճառաւ առաջ են գալի աւելորդ ու իրկար գրադրու-  
թիւններ ի միաս շուտափոյթ կատարման և ի ժամավաճա-  
ռումն՝ ալաշտօնիաների և Մեր հաստատութեանց: Արդ  
այսօրինակ անյարմարութեանց և անտեղի զրագրութեանց  
առաջն առնելու համար՝ մեր այս կոնդակովը պատուի-  
րում ենք Զեր Գերաշնորհութեանը՝ շրջաբերական կարգա-  
դրութեամբ յայտնել Թէմիդ բոլոր ժողովուրդներին, որ  
խնդրատուները պէտք է դիմեն Մեզ՝ մերձաւոր Հոգեւոր  
հաստատութեանց պաշտօնէից և կամ Առաջնորդաց միջո-  
ցաւ, որ նորանց հնարաւոր լինին խնդիրները հարկաւոր  
տեղեկութիւններով և իրանց եղբակացութեամբ մասուցա-  
նեն Մեզ ի վերջնական տնօրէնութիւն:

41.

Առաջադրութիւն 30 Հոկտեմբ. 1909 ամի Հ. 1364  
Կողակ. 21 Հոկտեմբ. նոյն ամի Հ. 226.

Բոլորին քաջ յայտնի է, որ զանազան հնութիւններ  
և ձեռագիր գրքեր եկեղեցիներում և վանքերումը մատըն-  
վում են անուշադրութեան. և երկար անխնամ մնալսվ՝  
խոնաւութեան և փօշիների մէջ փչանում և ոչնչանում են:

Օրդ՝ հնութիւնները և ձեռագիր գրքերը կորչելուց և  
փչանալուց աղատ պահելու համար՝ այս մեր կոնդակովը  
պատուիրում ենք Զեր Դերաչնորհութեանը՝ կարգադրել  
ժողովել Թէմիդ բոլոր ծխական եկեղեցիներից ու վանքերից  
հնութիւնները և ձեռագիր գրքերը, բացի նորանցից, որոնք  
համարվում են Սլբութիւն, արձանագրել այն եկեղեցւոյ  
ու վանքի անունը, որի սեպհականութիւնն է համարվում  
հնութիւնը և կամ ձեռագիրը. և նորանց ուղարկել մեր  
անունով Մայր Աթոռի թանգարանումը և կամ մատե-  
նադարանումը ապահով վիճակի մէջ պահել նոյն եկե-  
ղեցւոյ և կամ նոյն վանքի անունով՝ որի սեպհականու-  
թիւնն է:

42.

Առաջադրութիւն 20 Յունվ. 1910 ամի Հ. 107.  
Հրաման Սինօդի 15 Յունվ. նոյն ամի Հ. 32. Կոնդակ  
Վեհափառ Հայրապետի 25-ն Դեկտեմբ. 1909 ամի Հ. 810

Եւ որովհետեւ մեր բոլոր Հոգևոր հաստատութիւննե-  
րն և պաշտօնեաները իրանց գործքերը և զրագրութիւն-  
ները կատարում են զրաբառլեզուով, որ չատ անզամ ան-  
հասկանալի է լինում պաշտօնեաներից շատերին, մանա-  
ւանդ, քահանաներից շատերը անսեղեակ են այդ լեզուին  
նոյնպէս երեսփոխաները և ուսումնարանների հոգաբար-

ձուները՝ որոնց հետ մեր հոգեոր պաշտօնեաների և հաստատութիւնների կողմից լինում են յաճախակի գրադրութիւններ, այս պատճառաւ Հոգեոր իշխանութեան գրաքառ լեզուով կարգադրութիւնները շատ գէպքերում մնում են ստորին պաշտօնեաններին անիմանալի, կամ սխալ հասկանալի, որին չետեսում է անկատար մնալը, և առհասարակ գործքերի յապաղելը:


Երդ, այս անյարմարութիւնների առաջն առնելու և գժուարութիւնները մէջ աեղիցը վերցնելու համար, որ մեր ժողովուրդները իրանց խնդիրը Մեր Անունով, Հոգեոր պաշտօնեանների և հաստատութիւնների գրեն աշխարհաբառ լեզուով, Մեր լաւ համարեցինք, Մեր Հոգեոր և դպրոցական վարչութիւնների օգտի և դիւրութեան, և կերպ կերպ կարգադրութիւնները անարդել և շուտ կակատարելու համար՝ թոյլ տալ գործ ածել գրադրութիւնները աշխարհաբառ լեզուով. և սորա համար առաջադրում ենք Սինօդիս, որ բոլոր թէմական Առաջնորդների միջոցաւ անել չըջարերական կարգադրութիւն, պատուիրելով Մեր բոլոր Դպրոցական և Հոգեոր հաստատութիւնների պաշտօնեաններին, առաջիկայ Յունվար ամսի մէկից գրադրութիւնները կատարեն աշխարհաբառ լեզուով. նոյնպէս պէտք է Սինօդի վարէ իւր գործքերը և գրադրութիւնները. իսկ երդումը՝ առաջուայ նման գրաբառ, երբ որ պէտք լինի երդուեցնելու ծառայողներին և կամ այլ և այլ գատարաններում վկաներին. միայն Հայրապետական Կոնդակները նախնաւանդ սովորութեանը համաձայն կշարունակուին գրաբառ լեզուով:

ւոյս Փետրվարի 2.ի Հ. 355. Հիմնուելով թէմակալ բարձր Սրբազն Առաջնորդի տարւոյս Յունիարի 26-ի Հ. 137 Առաջադրութեան վերայ որով առաջադրում է թէ Վեհափառ Կաթուղիկոս Ներկայ տարւոյս Յունի. 22-ի Հ. 14, չնորհած Կոնդակի պատճէնովը պատուիրում է Թէմիս բոլոր հոգեորականներին. որ անշեղ կատարին Կոնդակի խմասը, այն է. «Մեր հոգելոյս Նախորդը 1904 քթուի Յունի. 27-ի Հ. 158. Կոնդակով՝ Ռուսիոյ Հայոց Առաջնորդների միջոցաւ տուել էր տաճկահայ գաղթականներից օրուակուողների համար՝ թոյլտութիւն և կամ շարդելք. հենդ կէտ հրահանգներով: որոնց թ. և գ. կէտերում զրուած են. Բ. Թոյլատրվում է այն գաղթականներին պասկ՝ որոնք տասն և աւելի տարիներով հեռացել են հայրենիքից և այստեղ Ռուսիայում բնակութիւն հաստատել. և ճանաչվում են բնակիչներից և քահանացից: Գ, «Նորանց» որոնց ամուրիութեան և ընտանեկան պայմանների մասին 6—7 վաստանելի և դրադէտ մարդիկ կարող են երդմամբ և ստորագրութեամբ չաստատել:

«Մեր Դիւանից և Անոօդի գործերից տեղեկանալով, ոոր անբարեխիղ գաղթականներից ամանք երկար բնակուելով Ռուսիոյ զանազան տեղերում տասն տարուց աւելի, անխիղ մարդկանց սոււտ վկայութեամբ ձեռք են քերվում ամուրիութեան վկայական ու կրկին պասկվում, քթողներով իւրեանց կանանց և զաւակներին հայրենիքում:

«Արդ, այսպիսի գայթակղելի չարկի առաջն առնելու համար, վերցնում ենք վերցիչել Բ. և Գ. կէտերի միջոցաւ թոյլտուութիւնը. մանաւանդ որ արդիս դժուարութիւնները Տաճկական սահմանադրութեամբ փոխուել և վերացել են, այժմ գաղթականներին անարգել թոյլ են տալի վերադառնալ իւրեանց հայրենիք. ուստի թոյլ ենք

«տալի այն գաղթականների պատկը՝ որոնք ցանկանում են Համուսնանալ Ռուսիոյ սահմանումը, երբ ձեռներումը կունենան իւրեանց պաշտօնական վկայականը Առաջնորդիցը «և կամ փոխանորդիցը, իւրեանց ամուրիութեան և պատին արգելք չլինելու համար վկայուած» :\*)



Երջանկայիշատակ հանգուցեալ Վեհափառ Մըկըրտիչ Ա. Կաթուղիկոսի ի 11-ն Յունվարի 1907 ամի կոնդակով հաստատուած Հայաստանեայց Առաքելական սուրբ Եկեղեցւոյ ծխական կանոնադրութիւնը

Ա) ՀԱՄԱՅՆՔԻ, ԾԽԱԿԱՆԻ ԵՒ ԻՐԱՀԱՍՈՒԻԻ ՄԱՍԻՆ

1. Իւրաքանչիւր քաղաքի կամ գիւղի ամեն մի Հայ Եկեղեցւոյ կամ աղօթատան բոլոր ծխականները նայն Եկեղեցւոյ բոլոր միաբան հոգեսոր պաշտօնեանների հետ միասին կազմում են մի ծխական համայնք:

2. Որ և է հայ Եկեղեցւոյ կամ աղօթատան ծխական, են համարվում այն անձինք, որոնք առ նուազն վեց ամիս իրեն ծխական արձանագրուած են նոյն Եկեղեցւոյ կամ

\*) Նոյն իսկ այս բօնէիս ձեռումս ունեմ Երկու քննութիւն Տաճկահայ գաղթականների, որոնք պսակուել են Տաճկահայաստանում, այսուեղ էլ մի քանի տարիներից յետոյ պսակուել են, որոնց երկուսի կանայքն էլ իւրեանց զաւակներովն եկել են Ռուսիայ և սկսել են բողոքել, որոնց քննութիւնը արգէն շարունակվում է։ Գործակալ Գ. ա. ք. Մանդակունի

աղօթատան միաբան քահանաներից մէկի մասենում (աեսյօդ. 83).

3. Ծխականների պարտականութիւնն է իրանց եկեղեցւոյ ծխական ժողովի խնդրած ծառայութիւններին յանձնառու և եկեղեցական պէտքերի պահանջած ծախքերին մասնակից լինել:

4. Մի անձն միենոյն քաղաքում կամ գիւղում կուրող է միայն մի եկեղեցւոյ կամ աղօթատան ծխական լինել, ենթարկուելով այդ եկեղեցւոյ ծխական ժողովից սահմանուած տուրքերին և բոլոր ծխական պարտականութիւններին:

5. Ծխական բոլոր պաշտօնեանները՝ թէ հոգևորական և թէ աշխարհական, թէ պատուաւոր և թէ վարձատրելի ընտրուած են ծխական ժողովից:

6. Բոլոր պաշտօնեանները վերընարելի են բացի յատկապէս յիշուածներից:

7. Նորեկները այսինքն մի այլ ծխական համայնքից տեղափոխուողները՝ նոր եկեղեցւոյ կամ աղօթատան ծխական համարուել կարող են սոյն եկեղեցւոյ ծխական գրուելուց վեց ամիս յետոյ:

1.ոկ ժամաւորները, որոնք ծխական չեն՝ ծխական ժողովին մասնակցելու իրաւունք չունին:

9. Ծխական իրաւասու են, այսինքն ծխական ժողովներին մասնակցելու և պաշտօններ ստանձնելու իրաւունք ունին 21 տարին լրացած բոլոր ծխականներն արք և կանայք, բացի նորանցից որոնք հետեւեալ յօդուածի (յօդ. 10) հիման վերայ զրկուած են այդ իրաւունքից. տարիքը պէտք է հաշուել ոչ ամիսներով, այլ տարեթուերով:

10. Ծխական ժողովին մասնակցելու և ընտրուելու

իրաւունքից զրվելում են այն ծխական իրաւասուները:

Ա) Որոնք հոգեոր իշխանութեան օրինական դատաստանով զրկուած են, այդ իրաւունքից և կամ գտնվում են ապաշխարութեան տակ:

Բ) Որոնք պետական օրէնքների գօրութեամբ և դատաստանով քրէական յանցանքների համար բոլորովին կամ մասամբ զրկուած են իրաւունքներից:

Գ) Որոնք դատաստանի տակ են այնպիսի յանցանքների համար, որպէսիների հետեանքը լինում է բոլորովին կամ մասամբ իրաւունքներից զրկուելը մինչև դատաստանով արդարանալը:

### ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

11. Կւրաքանչիւր եկեղեցւոյ կամ աղօթատան բոլոր իրաւասու ծխականները նոյն եկեղեցւոյ կամ աղօթատան միաբան հոգեոր պաշտօնեաների հետ միասին կազմում են ծխական ժողովի:

12. Ծխական ժողովի նիստերը դռնբաց են լինում.

13. Բացի յատկապէս նախատեսուած գէպքերից ծխական ժողովների բոլոր վճիռները և ընտրութիւնները կատարվում են ձայների հասարակ մեծամասնութեամբ: Զայների հաւա արութեան դէպքում գերակշռում է այն կողմը, որին իւր ձայնը տալիս է ժողովի նախագահը:

14. Միմիայն կանոնաւոր կերպով կայացած ծխական ժողովում սահմանուած և ստորագրուած վճիռները և համախօսականները համարվում են վաւերական և օրինական գօրութիւն ունեցող: Ծխական ժողովից դուրս կազմուած որ և է համախօսական կամ բազմաստորագիր թուղթ նոյն իսկ պաշտօնապէս վաւերացուած ստորագրութիւններով ոչ մի օրինական ոյժ չունի:

15. Եթէ իրաւասու ծխականներից մէկը ժողովի իրաւասութեանը պատկանող որ և է զործի վերաբերութեամբ խարդախութիւն, կեղծիք կամ խարեբայութիւն է արել և ժողովի կողմից այդ ապացուցուել է ժողովի յատուկ վճռով այդպիսին կարող է զրկուել նոյն գործին առժամանակ կամ ընդ միշտ որ և է կերպով մասնակցելու իրաւունքից:

16. Ծխական ժողովի իրաւունքն է ձայների մեծամասնութեամբ փակել ընդհատել կամ յետաձգել նիստի շարունակութիւնը նոյն կամ ուրիշ օրուայ:

17. Ծխական ժողովի իրաւասութեանը պատկանուժ ևն հետեւեալ գործերը:

Ա.) Քահանացուների և եկեցական սպասաւորների ընտրութիւնը ծխարաժանութիւնը, քարողիչներ հրաւերելը:  
Բ.) Ծխական համայնքի տնտեսականի ընդհանուր կառաւարութիւնը և տնօրինութիւնը. երեսափոխ, չողարաձութիւններ ընտրելը և պաշտօնից հեռացնելը՝ նրանց գործնէութեան ըննութիւնը, վերահսկողութիւնը և հաշուառութիւնը, յանցաւորութեան դէպքում՝ նրանց քրէական և քաղաքացիական դատի ենթարկելը յատուկ հաւատարմատարի ձեռքով:

Գ.) Եկեղեցւոյ կամ աղօթատան բարեգարդութեան մասին հոգացողութիւն (անօթների մատակարարութիւն. երգեցիկ խումբ կազմակերպել և պահելը և այլն.)

Դ.) Քահանաների և եկեղեցական այլ պաշտօնեաների տնտեսական ապահովութեան խնդիրը:

Ե.) Ծխական տուրքեր և պարտականութիւններ սահմանելը:

Զ.) Քանալ ուսումնարաններ, հիւանդանոցներ, աղ-

քատանոցներ, ապաստարաններ և այլ բարեգործական հաստատութիւններ (տես. Փոխ. Կան):

Ե.) Ծխական համայնքի բարեգործական գործունէութեան ընդհանուր տնօրէնութիւնը նոյն եկեղեղեցուն կամ աղօթատան պատկանող աստուածահանոյ հաստատութիւնների պահպանութիւնը վերահակողութիւնն և և դրանց կառավարող յատուկ հոգաբարձուների ընտրութիւնը:

Ը.) Հարթի եղած դէպքերում ծխական համայնքի շահերը պաշտպանելը պետական դատարաններում քրէական և քաղաքացիական յատեր վարելով երեսփոխի կամ մի յատուկ հաւատարմատարի ձեռքով:

Թ.) Վ.կայութիւն և կարծիք յայտնել եկեղեցական գանձան հաստատութիւններում ըննուող և վճռուող այն գործերի և խնդիրների մասին, որոնք վերաբերվում են ծխական համայնքին կամ նոյն համայնքի աշխարհական և հոգևորական անդամներին:

Ժ.) Հարկաւոր դէպքերում հոգաբարձական յանձնաժողովներ ընտրելը՝ լինութիւններ, նորոգութիւններ և ծխական ժողովից յանձնարարուած այլ գործողութիւններ կատարելու համար:

Ժ.Բ.) Ծխական համայնքի բոլոր գործերի վերաբերամբ անհրաժեշտ և հարկաւոր կարգադրութիւններ սահմանելը.

Ժ.Բ.) պատգամաւորներ, ներկայացուցիչներ և նրանց փոխանորդներ ընտրելը ծխական համայնքի կողմից ուրիշ պատգամաւորական (օր. թեմական) ժողովների և այլ զանազան եկեղեցական գործառութեանց մասնակցելու համար:

18. Ծխական ժողով հրաւիրելու իրաւոնք ունին:

Ա.) Հոգենոր իշխանութիւնը:

բ.) Նոյն եկեղեցւոյ իւրաքանչիւր քահանայ:

Գ.) Երեսփոխը և չոպարարձուները:

Դ.) Մի քահանայ ունեցող ծխական համայնքում իրաւասու ծխականներից առ նուազն տասն և երկու (12) հոգի միասին, իսկ մէկից աւելի քահանայ ունեցող ծխական համայնքում իրաւասուներից առ նուազն քսան և չորս հոգի (24) միասին:

19. Ժողովի Հրաւելը կատարվում է զրաւոր հրաւելրաթղթով, պահանջվում է նաև բանաւոր ծանուցումն եկեղեցում:

Հրաւելրաթուղթն ուղարկվում է եկեղեցւոյ կամ աղօթատան բոլոր իրաւասուներին. իսկ մի մի օրինակ կախ է դրվում (առ նուազն մի շաբաթ) եկեղեցւոյ պատիվերայ, մուտքի դրան մօտ ներսը և գուրալ՝ յատուկ տեղում. հրաւելրաթղթում արձանագրուած պիտի լինի ժողովում խորհրդածուելիք և վճռուելիք հարցելիք օրակարգը:

Եկեղեցւոյ կամ աղօթատան քահանաները պարտաւոր են եկեղեցում բերանացի ծանուցումներ անել գումարուելիք ժողովի մասին գոնէ ելեք անգամ:

20. Սովորական ծխական ժողովատեղին է եկեղեցին. արտակարդ դէպքերում ժողովը կարող է գումարուել և մասնաւոր չէնքում. ժողովի ժամանակ եկեղեցում սեղանի վարագոյրը քաշուած է լինում:

21. Ժողով եկող իւրաքանչիւր ծխական իրաւասուստորագրում է իւր անունը և ազգանունը յատուկ թերթի վերայ:

22. Ծխական ժողովը առաջին անգամ կանոնաւոր է համարվում և նիստը բացվում է, եթէ ներկայ եղող ծխական իրաւասուների թիւը նոյն եկեղեցւոյ կամ աղօթատան

իրաւասուների (տարեցուցակում արձանագրուածների, տես՝ յօդ. 84.) Ընդհանուր թուի կիսից աւելի է:

23. Եթէ առաջին անգամ ժողովը չկայանայ՝ գումարուած ծխական իրաւասուների սակաւութեան պատճառով (յօդ. 22) կրկին անգամ իրաւասուները ժողովին հրաւիրվում 19 յօդուածում ցոյց առւած եղանակով, նշանակելով հրաւերաթղթում, որ այս երկրորդ ժողովին հրաւէրն է:

24. Երկրորդ ժողովը (յօդ. 23) կանոնաւոր է համարվում և նիստը բացվում է եթէ ներկայ եղող ծխական իրաւասուների (տարեցուցակում արձանագրուածների, տես յօդ. 84). Ընդհանուր թուի մի ասաներորդ մասից սրակա չէ. իսկ քահանացուի ընարութեան դէպքում մի հինգերորդ մասից (<sup>1/5</sup>):

25. Եթէ երկրորդ անգամ հրաւիրուած ժողովը ներկայ եղող իրաւասուների թուի սակաւութեան պատճառով չկայանայ, Հոգեոր իշխանութեան պարտականութիւնը է, եթէ միայն կան կարեոր և անյետաձգելի հարցեր, իւր նախաձեռնութեամբ և իւր ձեռքում եղած բոլոր միջոցներով ծխական իրաւասուներին ժողովի գումարել, իսկ անյաջողութեան դէպքում Հոգեոր իշխանութիւնը դիմում է Թէմական Խշանութեան, խնդրելով անօրէնութիւն:

26. Քաղաքնիրում ծխական ժողովի նիստը բաց է անում նոյն ծխական համայնքի քահանան, քահանայի բացակայութեան դէպքում երեսփոխը, իսկ երեսփոխի բացակայութեան դէպքում ներկայ զրագէտ իրաւասուներից տարիքով աւագը: Ժողովի բացողն 21րդ յօդուածում յիշուած թերթի սարագրութիւնները բարձրաձայն համեմատում է ծխական իրաւասունների տարեցուցակի (տես յօդ. 84. 85) հետ և ստուգում ներկայ գտնուող ծխական-

ների իրաւունքը ժողովին մասնակցելու (այս վերստուգուած թերթը յետոյ կցվում է ժողովի արձանագրութեանը), ապա ձեռնարկում է նախագահի ընտրութեանը, և նախագահի ընտրութիւնից յետոյ համարվում է լոկ ժողովական:

27. Ծխական ժողովի քարտուղարին, քուէտուփերի վերայ հսկողներին, բուեներ համարողներին, անդրագէտների համար թերթիկների վերայ գրողներին և նման պաշտօններին ընտրում է ծխական ժողովը:

28. Նախագահը հսկում է ընդհանուր կարգապահութեանը և ծխական ժողովի բոլոր գործողութիւնների կահանաւորութեան և վայելչութեան սահմաններից չեղուելուն:

29. Նախագահն իրաւունք ունի ծխական ժողովին ներկայ եղող կողմնակի, ոչ ժողովական (յօդ. 9. 10) տնձերին, որ և է անկարգութեան դէպրում, անմիջապէս հեռացնել ժողովից, կողմնակի անձանց թոյլատրվում է մի միայն լուռ ունկնդրութիւն:

30. Երկու անգամ պաշտօնապէս կարդի հրաւիրելուց յետոյ՝ նախագահն իրաւունքը ունի անկարգապահ ժողովականին զրկել խօսելու իրաւունքից, իսկ անկարգութեան յամառ շարունակութեան դէպրում, նոյն իսկ հրաւիրել ժողովականին թողնել ժողովը և հեռանալ:

31. Կայրայեղ դէպրերում երեք անգամ ամբողջ ծըլսական ժողովը կարգի հրաւիրելուց յետոյ, երբ այլևս անանհնարին կլինի շարունակել նիստը խոռոշութիւնների պատճառով, նախագահն իրաւունք ունի նիստը փակուած յայտարարել:

32. Ծխական ժողովում խորհրդածութեան և ձախնատուութեան առարկայ են լինում միմիայն օրակարգում նշանակուած հարցերը՝ բացի յատկապէս յիշուած խնդիրներից,

33. Խրաբանչիւր ժողովական ունի միայն մի ձայն կամ մի ըուէ:

34. Որեէս պատճառով ժողով չեկող ծխական իրաւասուն իւր ձայնը կամ քուէն ուրիշին յանձնելու իրաւունք չունի. բայց իրաւունք ունի իւր զրաւոր կարծիքն ուղարկել ժողովին, որ կարող է կարդացուել քուէարկութիւնից առաջ. եթէ ժողովն այդ կամենայ. Բայց այս զրաւոր կարծիքը հաշուի չէ առնում որպէս ձայն քուէարկութեան ժամանակ, այլ կցվում է ժողովի արձանագրութեանը:

35. Օրակարգում նշանակուած խնդիրներում անձնական շահ ունեցող ժողովականը չէ կարող ընտրուել ծրխական ժողովի նախագահ (յօդ. 36):

36. Այն ժողովականները, որոնք որ և է անձնական շահ ունեն խորհրդածուելիք և վճռուելիք խնդրում, կամ եթէ այդ խնդիրն իրանց է վերաբերում՝ այդ խնդիրի խորհրդածութեան և վճռման ժամանակ ժողովից հեռանում են: Ժողովականի կամ նախագահի (յօդ. 35) շահակից լինելը որոշում է ժողովը: Այդպիսիներից ժողովը կարող է հարցնել նրանց կարծիքը և ունեցած տեղեկութիւնները:

37. Եթի նախագահը որեէս պատճառով դեռ ժողովը չփակուած ստիպուած է թողնել նախագահութիւնը, պէտք է ընտրել նոր նախագահ:

38. Ի պաշտօնէ նախագահողները՝ եթէ նոյն ծխական համայնքի իրաւասու չեն՝ ձայնտւութեան կամ քուէարկութեան չեն մասնակցում:

39. Ծխական ժողովի որոշմամբ՝ ձայնատւութիւնը կամ քուէարկութիւնը (թէ վճռուելիք հարցերի և թէ ընտրութիւնների) կարող է լինել թերթիկներով և քուէներով կամ ձեռք բարձրացնելով:

40. Զայնատւութիւնը դադանի է լինում. եթէ ժո-

դովականներից նոյն իսկ մի հոգի քուէարկութիւնից առաջ այդ կտահանջի:

41. Թեկնածուներ որոշելիս նախագահը բաժանում է քողով ժողովականներին իւր կնքով կամ ստորագրութեամբ նշանձ մի մի թերթիկ, որի վերայ ամեն մի ժողովական գրում է իւրաքանչիւր ընտրելի պաշտօնեացի համար երկու թեկնածունից ոչ առելի: Այդ թերթիկները հաւաքվում ներթով կարդացվում են և նշանակվում է իւրաքանչիւր թեկնածուի ստացած ձայների թիւը: Այնուհետեւ թեկնածուները քուէարկում են ստացած ձայների առաւելութեան կարգով:

42. Քուէարկուել կարող են նաև ժողովից բացակայող անձինք, եթէ առաջարկողներն երաշխաւորում են որ նրանք չեն մերժի իրանց ընտրութիւնը:

43. Ինքը թեկնածուն չէ կարող մասնակցել իւր քուէարկութեանը:

44. Երբ մի պաշտօնի համար մի քանի անձինք պիտի ընտրուին (պատգամուորներ և այլն), ընտրութիւնն անպատճառ կատարվում է թերթիկներով, եթէ այդ պատճանին ժողովականներից առ նուազն հինգ հոգի:

45. Երբ ընտրութիւնը թերթիկներով է կատարվում ընտրողական թերթիկները նշնվում են նախագահի ստորագրութեամբ կամ կնքով, հաշուով բաժանվում են ժողովականներին, ձայնատևութիւնից յիսոյ հաշւով հաւաքվում և ընտրութեան արդիւնքը արձանագրելուց յիսոյ՝ անմիջապէս և տեղն ու տեղը ոչնչացվում են:

46: Եթէ որևէ պաշտօնի համար ընտրուելու են մի քանի անձինք և ընտրութիւնը կատարվում է թերթիկներով (յօդ. 44) իւրաքանչիւր ժողովական իրաւունք ունի իւր ընտրողական թերթիկի վերայ՝ փոխանակ տարբեր մարդկանց

անուններ զրելու, զրել միևնոյն մարդու անունը այնքան անգամ՝ որքան հողի են ընտրուելու: Քուէարկւողը համարվում է ստացած այնքան ձայն՝ որքան անգամ, որ նրա անունը կրկնուած է թերթիկներում:

47. Քուէարկւոթեան հնմարկուած թեկնածուների ստացած քուէները համարվում են և ձայնների առաւելութեան կարգով ցուցակադրվում: Ամենից շատ ձայն ստացողը համարվում է առաջին ընտրեալ. նորանից պակաս ստացողը՝ երկրորդ ընտրեալ. և այսպէս աստիճանաբար մինչև որ լրանայ ընտրեալի պաշտօնեանների հարկաւոր թիւը: Սոյն այսինքն ստացած քուէների առաւելութեան՝ կարգով դասաւորվում են և անձնափոխանորդները:

48. Միայն այն ձայնատւութիւնը կանոնաւոր կարող է համարուել՝ որին մասնակցել է նիստի բացման ժամանակ ներկայ եղող՝ իրաւասունների կիսից աւելին: Միայն՝ այն վճիռը կամ ընտրութիւնը կայտացած և գաւերական է համարվում, որ ստացել է յօդուա իւր՝ նիստի բացման ժամանակ ներկայ եղող՝ իրաւասունների քուէների կիսից աւելին:

49. Ծխական ժողովը փակուելուց առաջ քարտուղար կարգում է իւր կազմած արձանագրութիւնը, որի մէջ յաջորդական կարգով արձանագրուած են՝ լինում ժողովի բոլոր անցքերը և վճիռները: Մանրամասնօրէն արձանագրվում են՝ նախագահի կողմից կարգի հրաւիրման՝ ձայնից զրկելու և ժողովից հեռացնելու դէպքերը: Արձանագրութիւնը կարդացուելուց յետոյ՝ ուղղվում են սովորդած սխալները՝ և ապա բոլոր ժողովականները ստորագրում են նոյն այդ ժողովում:

50. Ծխական ժողովի վճիռների և ընտրութիւնների դէմ բողոք ունեցող ժողովականներն իրաւունք ունին ար-

ձանագլութեան տակ իրանց ստորագրութեան վերայ աւելացնել միայն այս երկու բառը՝ «բողոք ունիմ»։ «Բողոք ունիմ» դրողը և առհասարակ բողոք ունեցողներն երեք օրուայ ընթացքում տալիս է իւր գրաւոր բողոքը նախագահին կամ քարտուղարին արձանագրութեանը կցելու համար։ Բողոքողն իրաւունք ունի իւր բողոքի պատճենը վաւերացնել տակ նախագահի և քարտուղարի ստորագրութեամբ իւր մօտք պահելու համար։

51. Ծխական ժողովի բողոքաւոր վճիռների արձանագրութեանց պատճեները՝ ժողովի օրից առ առաւելն միշտաբար ընթացքում նախագահը պարտաւոր է ուղարկել մերձաւոր Հոգեոր իշխանութեան միջոցով Թեմական իշխանութեանը։ Թեմական իշխանութեան վճռի կամ բացատրութեան դէմ՝ հարկ եղած դէպքում, կարելի է բողոքել Հոգեոր բարձրագոյն Իշխանութեան։

52. Այն անրողոք վճիռները, որոնք վերաբերում են ծխական ժողովի իրաւասութեան պատկանող գործերին (յօդ. 17), անմիջապէս գործադրվում են, բացի յառկապէս լիցուածներից։

53. Երեսփոխի և հոգաբարձուների ընտրութիւնը և հեռացումը հաղորդվում է ի հաստատութիւն և ի գիտութիւն թեմական իշխանութեան։

54. Կոնսիստօրիայն, եթէ գանի որ ընտրուածը համապատասխան չէ կանոններում նշանակուած որևէ օրինական պահանջի, առ առաւելն մէկ ամսուայ ընթացքում յայտնում է այդ մասին ծխական ժողովին։ Մէկ ամսուայ ընթացքում Կոնսիստօրիայից պատասխան չստացուելու դէպքում ծխական ժողովի վճիռն անմիջապէս գործադրվում է և ընտրուածներն ստանձնում են իրանց պաշտօնները։ Մէկ ամիս հաշվում է ընտրութեան օրից։

Գ.

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ (Զա-  
հընկալ սարկաւագ քահանայ)

55. Խւրաբանչիւր համայնք, քաղաքներում և գիւղե-  
րում որչափ էլ փոքրաթիւն լինի կարող է իւր սեպհական  
քահանան ունենալ, եթէ միայն համայնքը կապահովի քա-  
հանայի տնտեսական վիճակը:

56. Մի քանի սակաւաթիւ համայնքներ, որոնք առան-  
ձին առանձին չեն կարող իրենց սեպհական քահանան ու-  
նենալ կարող են ընդհանուր համաձայնութեամբ իրենց  
սեպհական քահանան ունենալ, եթէ նրանց հաղորդակ-  
ցութեան միջոցները արգելառիթ հանգամանք չեն ծառայ-  
ել:

57. Խւրաբանչիւր քահանայ պիտի ունենայ 250 ծուխ  
մատարաժին: Երկրորդ քահանայի խնդիր համայնքը  
կարող է յարուցանել այն դէպում երբ ծխականների ար-  
ների թիւը կչասնի 350 \*): Ըստ այսմ երրորդ քահանայի  
խնդիր համայնքը կարող է յարուցանել այն դէպում, երբ  
երկրորդ քահանայի համար արդէն լրացած կլինի սահմա-  
նեալ 250 ծուխը և աւելացած կլինի նաև 100 տուն: Նոյն  
հետևողականութեամբ պիտի վարուել յաջորդական քահա-  
նայական ընտրութիւնների բոլոր դէպերում:

58. Եթէ քահանայի ծերութեան կամ մի որևէ է ան-  
բուժելի հիւանդութեան դէպում, որն արգելք է լինում  
նրան քահանայագործելու. համայնքը յարուցանում է նոր քա-

\* ) Ծան. Երկրորդ քահանան՝ միմիայն հովում է իւր ծուխը, նո-  
կարող է աւագագոյն քահանայի ծուխը հովուել կամ նրա ծիսից  
բաժին ստանալ վերջինս գրաւոր թոյլտութեամբ:

հանայ ունենալու խնդիր, այդ դէպքում վերջինս գրաւոր ստորագրութեամբ պարտաւորփում է արդիւնքների կէսը յատկացնել ծեր կամ հիւանդ քահանայի ցմահ և կամ ինքը համայնքն զժհացումն տալիս նրան, հակառակ դէպքում նոր քահանայի խնդիրը մերժվում է թեմական իշխանութեան կողմից:

59. Հոգեոր պաշտօնեաներ ընտրելիս ծխական ժողովը պիտի անշեղ կերպով տաւաջնորդուի հետեւեալ հրահանգով:  
ա) Ընտրելիները համապատասխան են, բացի մեր եկեղեցւոյ ընդհանուր կանոնական պահանջներից՝ նաև հետեւեալ պայմաններին, պիտի օժտուած լինեն բարոյական արքանիքներով և ունենան քաղաքների համար ս. Էջմիածնի Ճեմարանի և կամ առ նուազն թեմական կամ այլ միջնակարդ դպրոցի աւարաման վկայագիր, իսկ գիւղերի համար առ նուազն չորս դասարանի վկայագիր հարիւր տանից պակաս գիւղի համար առ նուազն թեմական դպրոցի երկրորդ դասարանի վկայագիր: Աշխարհիկ դպրոցներում կրթուածները նաև Հոգեոր դպրոցների ՚Ն. և Բ. դասարանի աւարտման վկայագիր ունեցողները կրօնական առարկաներից\*) և Հայոց լեզուից պահանջուած ծրագրով քննութիւն պիտի տան թեմական դպրոցում կամ ս. Էջմիածնի Հոգեոր Ճեմարանում\*\*):

\*) Ման. Հմուռաթիւն ս. գրոց եկեղեցւոյ խորհուր դները, կարգ Աստուածաշտութեան, Տօնացոյցի գործածութիւնը, Հայոց եկեղեցւոյ և Հայոց պատմութիւնը՝ ամբողջութեամբ, Երգեցողութիւն, (շարականներ ըստ հնի կամ ձայնագրելի):

\*\*) Ման. Ճեմարանի և թեմական դպրոցի վարչութիւնը պարտաւոր են մինչև մի ամիսը քահանացուի խնդիրը ստանալու օրից սկսած, քննութեան հնթարկել նրան և պահանջուելիք վկայականը տալի Քննութիւնը կատարում են առարկաների ուսուցիչները տեսչին կամ նրա օգնականի ներկայութեամբ:

Բ) Վկայագիր չունեցողները պիտի պատշաճաւոր քննութիւն տան՝ պահանջուելիք առարկաներից վկայագիր ձեռք բերելու համար՝ միայն թեմական դպրոցներում կամ ու եջմիածնի Հոգենոր Շեմարանում:

Գ) Ընտրուածի բարոյական անարատութեան մասին վկայեւու է ծխական ժողովը:

60. Հոգենոր պաշաօնեայ ընտրուած կարող է համարուել միայն նա, ով ստացել է օգուտ իւր ժողովում ներկայ եղող իրաւասուների ձայների  $\frac{2}{3}$  մասը (տես յօդ. 24):

61. Նախազանը ժողովի կազմած արձանագրութիւնն երկու օրուայ ընթացքում պարտաւոր է ներկայացնել մերձաւոր հոգենոր իշխանութեան, որը, պահանջելով քահանացուի Ռւամանան, Շննդեան Զինուորակոչի վկայականները, նրա համաձայնութեան ստորագրութիւնը նաև տեղեկութիւն ընտրող համայնքի մատաղարաժին ծխերի և քահանաների թուի մասին՝ ուղարկում է մի շաբաթուայ ընթացքում Վիճ. Կոնսիստորիային. Վերջինս պարտաւոր է ստանալու օրից մինչև երկու շաբաթն ընթացք տալ գործին:

62. Դիւզերում հոգենոր պաշտօնեանների ընտրութիւնը կատարվում է անպատճառ Դործակալ քահանայի կամ տեղական Յաջորդի ներկայութեամբ և նախազանութեամբ:

63. Ծխական համայնքը հոգում է իւր հոգենոր պաշտօնեանների տնտեսականը հետեւեալ զանազան եղանակներով, բայ որոշման ծխական ժողովի:

ա) Մշտական ոռօնիկ որ սահմանում է ծխական ժողովը.

բ) Տուրքեր որ ստանում են հոգենոր պաշտօնեանները հոգենոր ծխակատարութեանց համար:

գ) Կամաւոր նուիրաբերութիւններ:

դ) Գիւղերում—հոդ, կալամաս (տարեհախ):

64. Հոգենոր պաշտօնեանների սովորոյթալ ընդունուած

հասոյթները կարելի է փոխարինել ռոճկով այնպիսի ծխաւկան ժողովում և ձայների այնպիսի մեծամասնութեամբ, որ պահանջում են այս կանոնադրութեան 60 յօդուածը:

Դ.

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՅՔԵՐԻ ՄԱՍԻՆ

65 Եւրաքանչիւր ծխական համայնք ինքն է կառավարում և տնօրինում ծխական ժողովի միջոցով իւր գոյքը (բոլոր շարժական և անշարժ կայքը) յօդուտ նոյն ծխական եկեղեցւոյ հիմնարկութիւների և անձերի:

Նոյն ծխական համայնքի շրջանից դուրս անելիք ծախսերի համար անհրաժեշտ է Բարձրագոյն Հոգեոր իշխանութեան թոյլտուութիւնը:

66. Առանց ծխական ժողովի համաձայնութեան նոյն ծխական եկեղեցուն յատկացուած և պատկանող գոյքից (բոլոր շարժական և անշարժ կայքից) ոչ մի ծախս լինել չէ կարող:

67 Ծխական հոգարձուները սպարտաւոր են հաշիւներկայացնել թեմակալ Առաջնորդին և թէ ծխական ընդհանուր ժողովին, որոնք այդ հաշիւների վերաստուգութեան համար ընտրում են վերաստուգող յանձնաժողով:

68. Ծխական ժողովն իրաւունք ունի իւր որոշմամբ տարեկան ծախս անել զիւղերում՝ հարիւր (100) ռուբլուց ոչ աւելի, իսկ քաղաքներում վեց հարիւր (600) ռուբլուց ոչ աւելի, մինչև այս գումարներն եղած ծախսի մասին հաղորդվում է Կոնսիստորիային՝ մերձաւոր Հոգեոր իշխանութեան ձեռքով ի գիտութիւն: Խոկ այս գումարներից վեր ծախսերի համար ծխական ժողովը պիտի խնդրէ Բարձրագոյն Հ. Իշխանութեան թոյլտուութիւնը:

69. Տնտեսական, այսինքն գրամական և գոյքի գիրաբերեալ, այն խնդիրներն որոշելու համար, որոնց գումարը անցնում է ծխական եկեղեցւոյ տարեկան եկամուտից կամ յամենայն դէպս գիւղերում (100) ռուբլուց գաղանջիում է որ վճիռը ստանայ յօգուտ իւր սովորական ծխական ժողովին (տես. յօդ. 24) ներկայ իրաւասուների ձայների երկու երրորդականից ( $\frac{2}{3}$ ) ոչ պակաս:

70. Եթէ եկեղեցական եկամուտները բաւական չին | Ն ծխի բոլոր կարիքներին բաւարարութիւն տալու, հոգաբարձութիւնը կազմում է ծխականներից միանուագ կամ պարբերաբար գրամով կամ ընական որոշ տուրք ժողովելու նախագիծ։ Այդ նախագիծն առաջարկվում է ծխական ընդհանուր ժողովի քննութեան և օրինաւոր կերպով ընդունելուց ու համախօսական կազմելուց յետոյ՝ պարտաւոր է դառնում համաձայնութիւն տուողների համար։

71. 'Ծխական եկեղեցապատկան գրամագլուխները տոկոսով աճեցնելու համար պէտք է յանձնուեն պետական կամ հասարակական բանքային հաստատութեանց։ Այս գրամագլուխները կարելի է նաև մասնաւոր մարդկանց յանձնել՝ եթէ եկեղեցւոյ համար այդ յարմար և ձեռնատու դառնուի և յանձնուելիք գումարը հաստատ գրաւականով ապահովուի՝ միայն թէ Կոնսիստորիայի թոյլաւութեամբ և պատասխանաւութեամբ (տես պօջ.՝)

72. Այն բոլոր ծխական եկեղեցիները, որոնք տարեկան հազար (1000) ռուբլուց աւելի եկամուտ ունին, պէտքէ իւրաքանչիւր տարուայ սկզբում ծխական ժողովով իրանց տարեկան ելնմաքի նախահաշիւը (ըիւջէ) կազմեն, թեմական իշխանութեան հաստատել տան և անցեալ տարուայ հաշիւն ու գեկուցումը երեսփոխից ու հոգաբարձուներից

ստանալուց և ժողովում քննելուց յետոյ՝ պէտքէ տպագրել տան այդ բոլորը, ծխական իրաւասուներին բաժանելու համար։ Եյդ տպագրուած տեղեկագրից երկու օրինակ ուղարկվում է Վեհափառ Հայրապետի Դիւանը և մի մի օրինակ Հոգեոր կառաւարութեան։ Կոնսիստօրիային, Սինօդին և Ա. Էջմիածնի պաշտօնական թերթին։

73 Իւրաժանչիւր ծխական եկեղեցի պէտքէ ունենայ մի ստոյդ և մանրամասն ժապաւինեալ մատեան եկեղեցւոյ անշարժ գոյքը, անօթեղեններն և այլ իրերը և զրամագլուխները ցուցակագրելու համար, նաև այն բոլոր եկամուտների համար, որոնք որ և է իրաւուրքով չասցնելու են նոյն ծխական եկեղեցուն։ Նոյնպէս պէտքէ ունենայ մի ուրիշ «ելեմուտից ժապաւինեալ հաշուէմատեան» ծխական եկեղեցւոյ տարեկան բոլոր ելք ու մուտքը դրելու (տես պօլօծ)։

Ե

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԵՄՓՈԽԻ ԵՒ ՀՈԴՍԲԱՐՁՈՒԹ. ՄԱՍԻՆ

74 Ծխական եկեղեցւոյ գոյքի կառաւարութեան ընթացիք գործաւարութեան համար ծխական ժողովն ընտրումէ մի երիսխոսին 2—4, հոգաբարձու երեք տարի ժամանակուի Հին կազմը կարող է վերընտրուել միմիայն այն գէպրում, եթէ նորա հաշիւները քննուած են վերաստուգիչ յանձնաժողովից և ճանաչուած են ծխական ժողովից իրեւ ստոյդ և անթերի, այլ և նորա գործավարութիւնն՝ անպարսաւ։

75 Նոր՝ հոգաբարձութեան ընտրելուց առաջ ծխական ժողովը պէտքէ նախ քննէ հինքաղմի հաշիւները վերաստուգով յանձնաժողովի գեկուցումը նորա գործավարութեան

մասին, և ապա կատարէ նոր հոգաբարձութեան ընտըռւթիւնը։ Խակ եթէ Հոգաբարձութիւնը ժամանակին չներկայացնէ հաշիւները, կամ եթէ ներկայացրած հաշիւները ծխական ժողովից կհամարուին անբաւարար կամ վիճելի այս դէպքում՝ անմիջապէս կձեռնարկուի նոր կազմի ընտրութեանը, իսկ հինը կհամարուի պաշտօնից հեռացած և պատասխանատու իւր գործաւարութեան և հաշիւների համար։ — Նոյն այս ժողովում՝ հարկ եղած դէպքում՝ կարելի է որոշել հին երեսփոխին դատի ենթարկել։

76 Նոր հոգաբարձութիւնը իւր պաշտօնը ստանձելիս պարտաւոր է ստուգել եկեղեցապատկան բոլոր գոյրի (շարժական և անշարժ) անթերի և ամբողջ լինելը և ընդունել իւր նախորդից՝ 73 յօդ. հիման վերայ կազմած ցուցակով։

77 Հին հոգաբարձութիւնը շարունակումէ իւր պաշտօնաւարութիւնը մինչև որ նորը կստանձնէ իւր պաշտօնը իւր նախօրդից յանձնողական ստացողական ցուցակով կընդունէ ծխական եկեղեցւոյ բոլոր գոյրը (անշարժ և շարժական, տես յօդ. 72 և 73):

78 Եկեղեցւոյ գոյրի ամբողջութեան վերայ հսկելը եկեղեցւոյ արդիւնքների կառաւարութիւնը, եկեղեցւոյ գործերի պատշաճաւոր ատենական տեղերում պաշտպանութիւնը, եկեղեցական չէնքերի կառուցումը վերանորոգումը, վարձով տալը և բոլոր նման գործերը մտնում են հոգաբարձութեան պարտաւորութեանց շրջանը։ Սա առհասարակ գործումէ իրքև հաւատարմատար ի դիմաց ծխական համայնքի, իսկ կարենոր գործերում նա իրաւունք ունի պահանջելու ծխականների ըստ կարելոյն բազմամարդ ժողովից առանձին հաւատարմաթուղթ։ Ստանալով այս հաւատարմաթուղթն այն գործերի համար, որ այս ծխական

ժողովումն են որոշուած՝ նա արդէն ազատ է ամէն տեսակ պատասխանառութիւնից ծխական համայնքի առաջ (յօդ պոլոժ. 1224/125)։

Հոգաբարձուները առ անց ծխական ժողովի վճռի իրաւունք չունին ծախսելու՝ գիւղերում յիսուն (50) ռուբլուց աւելի, իսկ քաղաքներում հարիւր ռուբլուց (100) աւելի։ Դրամական՝ բոլոր ծախսերի համար պահանջվումէ ստացողի ստորագրութիւնը և Ելեմտից մատեանում» կամ առանձին ապացուցաթուղթ ստացողի ստորագրութեամբ։

80. Քաղաքներում ծխական եկեղեցւոյ գումարներից հոգաբարձուները իրաւունք չունին հարիւր (100) ռուբլուց աւելի առձեռն դրամ պահելու մօտերը Աւելի գումարները պէտք է յանձնուեն պետական և հասարակական բանքային հաստատութեանց (տես յօդ. 71) ծխական եկեղեցւոյ անունով։ Այդ դրամատներից վոր ստանալու համար հոգաբարձուները պէտք է ունենան ծխական ժողովի համաձայնութեան թուղթը (համախօսականը)։

81. Գիւղերում իւրաքանչիւր վեց ամիսը մի անդամ հոգաբարձութիւնը գանձանակը և հաշիւները ստուգելուց յետոյ 50 ռուբլուց աւելի եղած գումարը յանձնում են բանքային հաստատութեանց, այնպէս ինչպէս այդ բացարուած է նախընթաց 80 յօդուածում։

82. Իւրաքանչիւր քահանայի ծխական ժողովից տրը-վում է մի ժամաւրինեալ մատեան, որի մէջ քահանան պարտաւոր է ճշտիւ արձանագրել իւր բոլոր ծխերը, և դրանց արական և իդական անդամները։ Մատեանում իւրաքանչիւր ընտանիքի համար առնուազն յատկացվում է մի թերթ։ Այդ մատեանում արձանագրիում է իւրաքանչիւր ծխականի անունը, աղդանունը, ծննդեան օրը և տարին, նաև մատեանում արձանագրելու օրը։ Օր աւուր այդ մա-

տեանում նշանակում է քահանան իւր ծխերի մէջ եղած ծնունդը՝ իւրաքանչիւր ընտանիքի թերթում, նաև վախճանուածներին և ծխականութիւնից հրաժարուածներին։ Մատեանը պահպում է եկեղեցում։ Այդ մատեանում են արձանագրիպումնաև բոլոր նորեկ ծխականները (տես յօդ. 7)

83. Ամեն տարի հոկտեմբեր—նոյեմբեր ամիսներին ծխական եկեղեցւոյ քահանանները, հոգաբարձուները երեսփոխը կազմում են մի ցուցակագրող յանձնաժողով և քաղելով քահանանների մատեաններից կազմում են ծխական իրաւասուների տարեցուցակ՝ ուր արձանագրուած պէտք է լինին այն բալոր կենդանի ծխականների անունները (տես. յօդ. 22). որոնք արդէն հասել են կամ յաջորդ տարուայ ընթացքում հասնելու են 21. ամեայ հասակին (տես. յօդ. 9).

84. Ծխական իրաւասուների տարեցուցակը պարզ և մարուր գրվում է և նոյեմբերի 20-ից ոչ ուշ կախվում է եկեղեցւոյ ներսում և դրսում մուտքի դրան մօտ և մնում է այդտեղ մշտապէս մինչև յաջորդ տարուայ ցուցակի կախելը։ Հին տարեցուցակը վերցնվում է նորը կախելիս։ Մի մի օրինակ այդ տարեցուցակից ուղարկվում է մերձաւոր Հոգևոր Իշխանութեանը և Կոնսիստորիային։

85. Իւրաքանչիւր ծխական իրաւունք ունի բողոքելու ցուցակագրող յանձնաժողովի կազմած տարեցուցակում սպրդած սխալների դէմ նախ իրան յանձնաժողովին։ Եթէ ցուցակագրող յանձնաժողովը չյարգէ բողոքը, բողոքատուն իրաւունք ունի դիմել ծխական ժողովին, որն և տալիս է վերջնական վճիռ։ Նախ քան օրակարգի հերթական հարցերին անցնելը։

86. Ամեն մի ծխական եկեղեցւոյ կամ աղօթատանը տարեկան ընդհանուր եկամուտի մի տոկոոր ( $1^{\circ}/_0$ ) իւրա

քանչիւր տարուայ վերջում ուղարկվում է մերձաւոր Հռոգեստ Խշանութիւն ձեռքով և Էջմիածնի Սինօդը՝ Մայր Աթոռի գանձարանում պահելու համար իբրև յատուկ՝ ծըլսական եկեղեցիների պահեստի՝ գումար:

87. Այդ տոկոսը (յօդ. 86) վճարելուց ազատ են բոլոր այն ծխական եկեղեցիները և աղօթատները, որոնց տարեկան եկամուտը չէ հասնում հարիւր (100) ռուբլու:

88. Բոլոր այն ծխական եկեղեցիները, որոնց տարեկան եկամուտը (1000) ռուբլուց աւելի է, մի հազարից աւելի գումարների համար մինչև տասն հազար ռուբլին՝ վճարում են ծխական պահեստին երկու տոկոս (2<sup>0</sup>/<sub>0</sub>):

89. Բոլոր այն ծխական եկեղեցիները որոնց տարեկան եկամուտը տասն հազար ռուբլուց աւելի է, տասն չափարից աւելին գումարների համար՝ վճարում են ծխական պահեստի գումարին երեք տոկոս (3<sup>0</sup>/<sub>0</sub>):

90. Ծխական եկեղեցիների պահեստի գումարը գործադրվում է միմիայն ամենակարօտ ծխական եկեղեցիների ամենակարեղոր պէտքերին, Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ, և Էջմիածնի Սինօդի որոշմամբ, կարօտ ծխական համայնքների խնդիրներն ի նկատի առնելով:

91. Ծխական պահեստի գումարից տրուած նպաստների մասին մանրամասն հրատարակվում է և ա. Էջմիածնի պաշտօնական թերթում:

92. Ծխական ժողովներն իրաւունք ունին պատճառաբանուած միջնորդութիւններ յարուցանել Վեհափառ Հայրապետի անունով տուած խնդրագրով՝ այս կանոնադրութեան այս կամ այն կէտի վորիխութեան համար: Այդ միջնորդութիւնները կապահուին Վեհափառ Հայրապետի դիւանում, ծառայելու համար իբրև նիւթ այս կանոնադրութեան ապագայ—բարեփոխութեանց:

93. Առւսաց պետութեան սահմաններից դուրս (Պարսկաստան, Հնդկաստան, Տաճկաստան, Եգիպտոս, Բուլղարիա, Մումանիա, Կիսրոս, Եւրոպա, Ամերիկա, և այլն). Հայ ծխական համայնքներն, այս կանոնադրութիւնը յարմարացնելով իրանց տեղական պէտքերին և եկեղեցական կազմակերպութեանը՝ ներկայացնում են Առհափառ Հայրապետին ի հաստատութիւն:

94. Եյս ծխական կանոնադրութեան պաշտօնական հրատարակմամբ և զործագրութեամբ դադարում են Հոգեոր բարձրագոյն, թեմական և տեղական իշխանութիւնների կողմից այս առարկայի վերաբերութեամբ տրուած այն բոռոր թէ ընդհանուր և թէ մասնական կանոններն ու հրահանգները, որոնք չեն ստացել պետական իշխանութեան հաստատութիւնը:



Ժամանակաւոր կանոններ Հայ-Լուսաւորչական եկեղեցիների գոյքերի կառավարութեամբ մասին Կովկասեան Փոխարքայութեան Սահմաններում  
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՅՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐ-  
ՄԱՐՄ

1. Հայ լուսաւորչական եկեղեցիների գոյքերի կառավարչութիւնը յանձնվում է ծխական հոգաբարձութիւններին, բաղկացած երեսփոխից և անդամներից թուով 2-4 հաւասար իրաւունքներով, որոնց ընտրում են ծխակաները իրանց միջից 3 տարով:

2. Ծխական Հոգաբարձուների անդամների ընտրութիւնը կատարվում է ծխականների ընդհանուր ժողովներում ներկայ եղողների ձայների մեծամասնութեամբ և հաստատվում է թեմական Առաջնորդից:

3. Ծխականների ընդհանուր ժողովներում ձայնի իրաւունք ունին ծխին պատկանող արական սեռի 25 տարի հասակ ունեցող բոլոր անձերը, որոնք օրինական իրաւունք են վայելում հասարակական պարտաւորութիւններ կատարելու և եկեղեցւոյ ծխականներ են հաշվում ոչ պակաս քան 2 տարի:

4. Ծխական հոգաբարձուների վրայ պարտականութիւն է դրվում հոգ տանելու պատշաճաւոր թոյլտութեամբ հիմնելու դպրոցներ, հիւանդանոցներ, ապաստարաններ և այլ բարեգործական հաստատութիւններ:

5. Եթէ եկեղեցական եկամուտները բաւարարութիւն տալու շինին ծխերի բոլոր կարիքները հոգաբարձութիւնը առաջադրութիւն է անում ծխականներից որոշ տուրք նշանակելու վերաբերմամբ, այդ տուրքը կարող է լինել միանուագ կամ մշտական, դրամով կամ իրերով: Այդ առաջադրութիւնը առաջարկվում է ծխականների ընդհանուր ժողովի ըննութեան և նորա կողմից ընդունվելուց և այդ մասին վճիռ կայացնելուց յետոյ դառնում է պարտաւորական համաձայնութիւն յայտնողների համար:

6. Խըրաբանչիւր տարուայ ել և մտի նախահաշիւր՝ կազմած հոգաբարձութեան կողմից ստանում է ծխականների ընդհանուր ժողովի հաւանութիւնը և հաստատվում է թեմական Առաջնորդից:

7. Ծխական հոգաբարձութիւնները պարտաւոր են հաշիւ տալ թէ վիճակաւոր Առաջնորդին և թէ ծխականների ընդհանուր ժողովներին, որոնք իւրաքանչիւր տարի

ընտրում են առանձին վերատուղող յանձնաժողովներ՝ հա-  
շիւները ստուգելու համար:

Ուզիդ է ընդ իսկականին  
Առաջնորդ Թեմին Հայոց Վրաստանի եւ իմերեքի՝  
Դարեզին Արք-Եպիսկոպոս:

## Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ներսիսեան Ազգային Հոգեոր Դպրոցի Հոգաբար-  
ձական ընտրութեան

1.

Ներսիսեան Ազգային Հոգեոր Դպրոցի համար Հոգա-  
բարձուներ ընտրու եկեղեցական ծխական պատգա-  
մաւորների ընտրութիւնը կատարվում է ծխական ընդհա-  
նուր ժողովներում ներկայ եղողների ձայների առաւելու-  
թեամբ:

2.

Ընտրութեան օրուայ համար որտեղ լրագիր կայ,  
աւագ երէցը պարտաւոր է յայտարարել լրագիրների միջո-  
ցաւ. իսկ լրագիր չեղած աեղում պէտք է ծանուցանէ եկե-  
ղեցում և ժողովրդեան ուշադրութիւնը հրաւիրէ եկեղեցւոյ  
դուան փակցրած ընտրութիւնը յայտարարող ծանուցագրի  
վերայ:

3.

Ժողովը հրաւիրում է եկեղեցւոյ աւագ երէցը և ծը-

Խականների թիւը ստուգելուց յետոյ՝ երբ գտնումէ օրինաւոր, ժողովը բաց է անում և հրաւիրում է ժողովականներին ընտրել նախագահ և քարտուղար։ Ժողովը օրինաւոր է համարվում, եթէ ծխականների  $\frac{1}{3}$  ներկայ է լինում։

4

Ծխական ընդհանուր ժողովը ինքն է որոշում ընտրութեան, եղանակը՝ այսինքը տուփերով, տոմսակներով թէ մի այլ կերպ։ և ստուգելով ժողովականների ընարողական իրաւունքը՝ համաձայն 6-րդ յօդուածի, կազմում է արձանադրութիւն ընտրութեան եղանակի համար, ապա ձեռնարկումէ ընտրութեան։ Ընտրութիւնից յետոյ կազմումէ արձանադրութիւն ընտրութեան հետեանքի վերաբերութեամբ, որին ստորագրում են նախագահը, քարտուղարը և ժողովականները։

5.

Եթէ առաջին ժողովը չկայանայ, երկրորդ ժողովը նշանակվում է մի շարաթից յետոյ<sup>\*)</sup> և ժողովը համարվում է օրինաւոր՝ որքան և պակաս լինի ժողովականների թիւը<sup>\*</sup>։ Համաձայն 2-րդ յօդուածի։

6.

Ծխականների ընդհանուր ժողովներում ձայնի իրաւունք են վայելում այն բոլոր այր մարդիկ, որոնք առնուազն երկու տարի նոյն եկեղեցւոյ ծուխ են, 25 տարեկան են և օրինական իրաւունք են վայելում հասարական պարտականութիւններ կատարելու։ (Փամ. կանոն. Կ. Փոխարքայի յօդ. 3:)

7.

Խւրաբանչւ և մի քահանայ պարտաւոր է ընտրու-

թիւնից տասն օր առաջ ներկայացնել եկեղեցւոյ աւագերէցին իւր ծխոց այր մարդկանց անուանական ցուցակը համաձայն 6-րդ յօդուածի:

8.

Ծխատէր քահանաները իրանք են պատասխանատութեմական իշխանութեան առաջ. երբ կազմած ցուցակը անհամապատասխան կլինի 6-րդ. յօդուածի իմաստին:

9.

Ամեն մի հոգեորական անձն, լինի նա քահանայ, սարկաւագ կամ դպիր, իրաւունք ունի ընտրող և ընտրելի լինել:

10.

Թիֆլս քաղաքի ամեն մի եկեղեցւոյ ծխական ժողով պարտաւոր է ընտրել երկու ներկայացուցիչ (պատգամաւոր) դպրոցի հոգաբարձութեան խորհրդի անդամներ ընտրելու համար, թեմի միւս քաղաքների եկեղեցական ծխական ժողովները մի մի. իսկ իւրաքանչիւր մի դործակալութիւնից նոյնակչ մի մի: (Օրինաց XI հատոր 1 մասն, յօդ. 1206)

11.

Ծխական ընդհանուր ժողովները պատգամաւորներ ընտրելու ժամանակ պարտաւոր են ընտրել և նորանց կանդիտատներ:

12.

Ծխական ընդհանուր ժողովները՝ նախ քան ընտրեալ ների քուէարկութիւնը, պէտք է ստանան նրանց համաձայնութիւնը:

13.

Գործակալութեան իւրաքանչիւր եկեղեցւոյ ծխական

ժողով պարտաւոր է ընարել մի պատուիրակ։ Դործակալութեան բոլոր զիւղերի ծխական ժողովներից ընտրուած պատուիրակները միասին պէտք է ընարեն որպէս պատգամաւոր գործակալութեան կողմի մի անձն և նոյնպէս և մի կանդիդատ համաձայն Ա-րդ յօդ։

14.

Ընտրուած պատգամաւորը պարտաւոր է մասնակցել Թիֆլիսում կայանալիք ժողովին անձամբ։ Իսկ եթէ անակալ դէպքով անկարող կլինի իւր վերայ դրուած պարտականութիւնը կատարել, այդ դէպքում նորան պէտք է փոխանակէ անձնափոխանորդը (կանդիդատը)։ Անձնափոխանորդը (կանդիդատ) պէտք է ունենայ գործակալի կողմից վաւերացրած հաւաստիագիր, այլև գործակալների վերայ պարտաւորութիւն է դրվում անձնափոխանորդի գալատեան համար նախօրօք գեկուցանել թեմական Խշանութեան։

15

Երեք օրուայ ընթացքում ժողովի նախագահը պարտաւոր է ժողովի արձանագրութիւննելն առանձին յայտարարութիւնով Թիֆլիսում ներկայացնել թեմական Առաջնորդին։ Գանձակ, Ախալցխայ և Գորի քաղաքներում-Առաջնորդական փոխանորդներին (փոխանորդ չեղած ժամանակ՝ Հոգեսոր կառավարութեան)։ Իսկ գործակալութեանց մէջ շրջանի գործակալին։

16.

Բողոքաւորները եթէ լինին՝ նորանց ստորագրութիւնը պէտք է վաւերացնէ կամ ծխական քահանան կամ զիւղա-

պետը և կամ դործակալը, բողոքները ներկայացնում են վերոյիշեալ կարգով, այլապէս կմնան առանց հետեանքի:

**Ծանօթութիւն.** այն գործակալութիւնները, որոնց իրաւունքը քաղաքից դուրս չէ տարածվում, առանձին պատգամաւոր չեն տալի, որովհետեւ քաղաքի իւրաքանչիւր մի եկեղեցի ընտրում է իւր պատգամաւորը:

**Առաջնորդ թեմին Հայոց Արաստանի և Կմերէթի Գարեզին Արք-Եպիսկոպոս**

1908 թուի յունիսի 17.




## ՅԱՆԿ

**Տ.Տ. ՄԱՏԹԵՈՍ Բ. ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԳ  
ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

Յառաջաբան . . . . .	3
Ուղերձ . . . . .	7
Նախկին Թէմական Առաջնորդ Տ. Դէորդ Արք-Եպիսկոպոս . . . . ,	12
Տփխիսի Թէմը . . . . .	13
Տփխիսի Հայոց Եկեղեցիներ. քահա. սարկ. դպիր	14
Տփխիսի Հայոց Վ.իճակային Կոնսիստորիայ .	19
Հրահանգիչ կանոն . . . . .	20
Հրահանգ քահանայական պարգևների	21
Տեղափոխութիւն քահանաների . . . . .	»
Եկեղեցւոյ գաւթում թաղուողների մասին .	22
Երեսփոխանների ծախսելու քանակութիւնը.	23
Եկեղեցւոյ կնիքը . . . . .	23
Զհասութեան մասին . . . . .	24
Քահանաների հերթակալութեան մասին .	24
Շխառակատարութիւնների արձանագրութիւն .	25
Երգման մասին . . . . .	25
Արձակուրդ-քահանաների գործակալի միջոցաւ	26
Ա. Դաւանափոխութեան մասին . . ,	26
Ա. Պատարագի վերաբերման մասին . . .	27
Ներկայ Թէմակալ Առաջնորդ տ. Գարեգին Արք-Եպիսկոպոս . . , .	30
Գերմանիոյ սահմանումը պսակուողները .	31
Ամուսնացելոց առողջութիւնը . . .	31

Խնամութեան աստիճանները . . . . .	32
Ամուսնացելոց հասակը . . . . .	32
Աւագ քահանաների և երեսփոխանների պարտաւորութիւնները . . . . .	33
Գիւղական քահանաների ծածուվլ քաղաք յաճախելը	34
Կիսայիշեալ մոմերի մասին հոգեհանգստ. ժամանակ	35
Բ. Դաւանափոխութեան մասին . . . . .	35
Մատեանների մասին . . . . .	36
Գ. Դաւանափոխների մասին կրկին . . . . .	37
Դ. Դարձեալ դաւանափոխների մասին . . . . .	37
Խնամութեանց և կնքաւորութեան մասին . . . . .	37
Ե. Դարձեալ դաւանափոխների մասին . . . . .	38
Ժապաւինեալ մատեաններ . . . . .	38
Զ. Դաւանափոխների անուշները մատեան մուծելու մասին . . . . .	38
Աւետիս Բ. Դուկասեանցի գթասիրական կտակ	39
Գիւղական քահանաների Տփխիսում ծէս կատարելու մասին . . . . .	39
Երեսփոխանների դրամատանից եկեղ. դրամ ստանալու մատին . . . . .	40
Է. Դարձեալ դաւանափոխների մասին . . . . .	40
Ամուսնալուծական խնդիրների դրօշմանիշ . . . . .	41
Եկեղեցական կալուածներ . . . . .	41
Օտար քարոզիչների մասին . . . . .	42
Ծէսերի արձանագրութեանց մասին . . . . .	42
Նոր ձեի ցուցակներ . . . . .	42
Ը. Դարձեալ դաւանափոխներոց մասին . . . . .	44
Հրէայ դաւանափոխների մասին . . . . .	44
Խնդրագործութեանց մասին . . . . .	45
Հնութեանց մասին . . . . .	46

Աշխարհաբանի գործածութիւնը . . . . .	46
Տաճկանայ գաղթելոց պատկի մասին . . . . .	48
Համայնքի ծխականի և իրաւասուի մասին . . . . .	49
Ծխական ժողովի մասին, . . . . .	51
Հոգեոր պաշտօնեայի բնորութեան մասին, ջա- նընկալ, սարկաւադ քանանայ . . . . .	60
Եկեղեցական գոյքերի մասին . . . . .	53
Եկեղեցւոյ նըեափոխի և հոգաբարձութեան մասին 66 Ժամանակաւոր կանոններ եկեղեցիներին պատ-	66
կանող գոյքերի վերաբերմամբ . . . . .	71
Հրանող ներախոհան Ազգային Հոգեոր գպրոցի Հոգաբարձական բնորութեան. . . . .	73





- |    |  |         |
|----|--|---------|
| 1. | Խարհրդագովաթեւն Դոկտոր Անդրանիկ Ամերիկաց-<br>ոց. էջ 292 երբակալուածներ էջ 48 (սպառ.)                                 | 2 ա. կ. |
| 2. | Ա. Գրոց Հին ուխտի սրբամատթեանց բնգար-<br>ձակ աշխարհաբառը լուսաբանութեամբ և<br>աշխարհի անցքերով. էջ 915 . . . . . 2 * | 50      |
| 3. | Ասկի Քարիկաց Հայ Ընտանեաց, երրորդ ազ.<br>70 օրուակերներով. էջ 905 . . . . . 5 *                                      |         |
| 4. | Գոնոսովոյութիւն Տփխափի Հայ քահանաների<br>միտրանութեան էջ 31 (քննութանելի) . . . . . 10                               |         |
| 5. | Գրախառի Մարդութիւններ. էջ 72, մի օրուակիրով . . . . . 25   |         |
| 6. | Դիւան Տփխափի Հայոց եկեղեցիների էջ 86 . . . . . 55  |         |

9.111 k 55 409.

Հայութ՝ Տիֆլիս, Պրոտօպերօ Գրիգորի Մանձակունի.



